№ 16 ՇԱԲԱԹ, 24 ՅՈՒՆՎԱՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 24 ՅՈՒՆՎԱՐԻ № 16

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Յունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

«Մշակը» ունի սեփական թղթակիցներ արևելեան և կովկասեան ռազմաբեմերի վրա—Վարշավա և մօտակայ շրջաններում, Կարս, Սարիղամիշ, Բայազիդ և այլն։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1915 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1915 թ.) միանուագ կամ մաս-մաս վճարած կլինեն 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան 1915 թ. ընթացքում ՁՐԻԱԲԱՐ հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը.

1) „Տանջվածը", մեծ վէպ ՇԱՀՐԻԱՐԻ, հայկական յեղափոխական կեանքից։
2) „Հայկական հարցը", լուսաբանված դոկումէնտներով, մի ստուար հատոր, պատկերներով։

Ծանօթ.—Արտասահմանեան բաժանորդները պրէմիաները ստանալու համար պիտի ուղարկեն ճանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, յունվարի 26-ին,
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
ՏԻԿ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ
ԲԵՆԵՖԻՍԻՆ
Կը ներկայացնէ
Առաջին անգամ հայ բեմի վրա
ՓՈԹՈՐԻԿ
Դրամա 5 արար. Ա. Օստրովսկիի, թարգմ. Վերգ. Մանուէլեանի։
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։
Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Ցուրինեան Ա. Ղազարեան
առ. (ա. օ.) 47. 2—1

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ
ՁԵՌԱԳՈՐԾԻՑ
Բացված է վեց դաս՝ երկրորդ պատր., երրորդ և չորրորդ հիմնական դասարաններում։
Խնդիրներն ընդունում են մինչև յունվարի 24-ը։
(առ.) (ա.օ.) 43. 3—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, շաբաթ,
յունվարի 24-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Կը ներկայացնէ
Ղարաբաղի աստղագէտը
Պատմական անցք 6 պատկերով. փոխադ. Սարդարեանի և Վրոյրի։
ԱՍՏՂԱԳԷՏԻ դերը կը կատարէ
դերասան պ. ՎՐՈՅՐԸ
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Ցամիկ, Եղիզբարեան. պ. պ. Բագրատունի, Բեգիջանեան, Գալստեան, Գարրօշ, Երամեան, Եղիզբարեան և Վրոյր։
Ռեժիսեօր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները 4—50 կ.։
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Տիկ. Վ. Մամուլեան և Ե. Խարազեան
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԻ 2%-Ը ՅԱՏԿԱՑՎԱԾ Է ՊԱՀԵՍՏԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ։
առ. 46. 1—1

Բժ. Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Վերադարձաւ։ Հիւանդների ընդունելութիւնը ժամը 5—7 երեկոյեան։
առ. (ա. օ.) 5—2

ՄՏՔԻ ԴԱՀԻՃՆԵՐ

Միտքը սպանելը, միտքը խեղդելը, մտքի արտայայտութեան դէմ սպառնալիք կարդալը, միտքը ահաբեկելը՝ եղել է ինկվիզիցիայի ամենահասու, ամենասուր գործիքը։

Բայց այդ ամենասուր գործիքն անգամ՝ իր ժամանակին ամենահզօր ինկվիզիցիայի նոյն իսկ հանճարեղ ներկայացուցիչների ձեռքում անզօր է հանդիսացել սպանել միտքը, որ միշտ յաղթական ճեմել և քայլել է դարերի ընթացքում, նուաճել բոլոր անառիկ ամրութիւնները, ջնջել տգիտութիւնը և մարդկային հոգու ու մտածողութեան տափակութիւնը, բթութիւնը և կոպտութիւնը։

Եւ մինչ քաղաքակիրթ աշխարհում ինկվիզիցիոնական միջոցները լոկ պատմութեան սեփականութիւն են, մեր հայկական իրականութեան մէջ, դժբաղդաբար, մտքի, մտածողութեան դահիճ լինելը դեռ ասպետութիւն է համարվում, մինչ այն աստիճան, որ մամուլի օրգանները կամ ուրախութեամբ, ցնծութեամբ են հիւրընկալում մտքի դահիճների խուլիգանական արտայայտութիւնները, կամ ցաւ են յայտնում, որ անկարող են տեղ տալ այդ խուլիգանական արտայայտութիւններին, հակառակ իրանց կամքի։

Սա կատարեալ բարոյական անկումն է, բարոյական և մտաւոր սնանկութիւն, խիստ բնորոշ մեր հայկական իրականութեան համար, երբ մտքի դահիճների դերն ստանձնում են ոչ թէ հասարակ, տգէտ, անկիրթ, անմշակ մարդիկ, այլ երգ.-հաւատարմատարներ, ուսումն առած հոգևորական, քաղաքագլուխ, բարեգ. ընկ. նախագահ։

Եւ ինչո՞ւ համար այս անարժան, անմաքուր դերի ստանձնումը։

Դուք մի համարձակէք մեր յօնքին դիպչել. դուք մի համարձակէք որոշ ճշմարտութիւն ասել, որովհետև այդ ճշմարտութիւնը ձեռնտու չէ մեզ, չէ գգվում մեր սնափառութիւնը, փառասիրութիւնը. մտածեցէք այնպէս, ինչպէս մենք ենք մտածում, և խօսեցէք այնպէս, ինչպէս մենք ենք խօսում. երբ մենք աղաղակում ենք, թէ պէտք է հարուստներին խունկ ծխել, չոքել նրանց առաջ, աղօթել նրանց համար, թող մէկը չը համարձակէ հակառակել մեզ. երբ մենք, փոխելով մեր տրամադրութիւնը, քարոզում ենք, թէ հարուստներին պէտք է ահաբեկել, որպէս զի փող տան, թող խմբագիրը չը մերժէ տպել մեր այդ յօդուածը, այլապէս մենք գայրոյթ կը յայտնենք և, փառք Աստուծոյ, կը գտնվի—չէ որ հայկական իրականութիւն է—մի հայ թերթ ևս, որ «գայրոյթ» բառը դիտմամբ կը փոխէ «զզուանքի» և երկրորդ օրը կը յայտարարէ, թէ սխալմունք է պատահել։

Ահա, ընթերցող, ուր է հասել XX դարում հայկական իրականութիւնը, որ գուցէ գոյութիւն չունէր ամենախաւարեալ դարերում, XVI, XVII դարերում։

Եւ այսպիսի պայմանների մէջ է կոչված հայ առաջադէմ, ճշմարտախօս, ժողովրդասէր մամուլը գործել։

Բայց մենք հայկական բոլոր քղանցքաւոր և անքղանցք փարիսեցիների երեսին կը պոռանք. Ո՜վ դուք մտքի և հոգու դահիճներ, «եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս»։

Ոչ, փարիսեցի և սադուկեցի իրաւաբաններ ու վարդապետներ, դուք անզօր էք սպանել միտքը, այլ միայն պատմութեան մէջ դուք կը ստանաք մտքի դահճի տիտղոսը, և դա կը լինի ձեր արժանի վարձատրութիւնն ու պարգևը։

Ի՞նչ շահեցիք դուք, երբ կամեցաք նոյնպէս մտքի դահիճ հանդիսանալ նշանաւոր ռուս գործիչ Միլիւկովի դէմ, մեղադրել նրան ապերախտութեան մէջ, որովհետև նա չէր մտածում այնպէս, ինչպէս հայ հայրենասէրն է մտածում. ոչինչ, ընդհակառակը. ամենամեծ հարուածը հասցրիք մեր ազգային մեծ դատին նրանով, որ այժմ մի նշանաւոր ռուս կուսակցութիւն, որպիսին է կադէտականը, ինչպէս տեսանք «Մշակի» երեկվայ համարում տպված մի լուրից, հրաժարվում է այժմ զբաղվել մեր հարցով։

Զսփոփեցէք, զսպեցէք ձեր լեզուն, դարձրէք նրան մարդավարի, վայելուչ, պայքարեցէք, քարոզեցէք ազնիւ, մաքուր զէնքով և մամուլը մի դարձնէք փողոց։ Sapienti sat.

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 յունվարի

ԿԱՀԻՐԷ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ բրիտանական ույժերը երէկ երեկոյեան Իսմայիլի շրջակայքում ճակատեցին թշնամուն։ Տաք հրացանաձգութիւնից ու թնդանօթաձգութիւնից յետոյ թիւրքերը նահանջեցին, տալով մեծ թւով գերիներ։ Անգլիացիք կորցրին 6 զինուոր վիրաւոր։

Պարզվեց, որ թիւրքերի մէջ դասալքութեան դէպքերը շարունակվում են։

ԿԱՀԻՐԷ.—Լոյս յունվ. 21-ի գիշերը թշնամին փորձեց անցնել Սուէզի ջրանցքը Տուսումի մօտ։ Անգլիական զօրքերը թշնամուն հնարաւորութիւն տուին ափ իջեցնել նիւթեր կամուրջ շինելու համար, իսկ երբ թշնամին սկսեց աշխատանքը, անգլիացիք յարձակում գործեցին, որ լիակատար աջողութեամբ պսակվեց։ Թշնամին փախաւ անկարգ, թողնելով ամբողջ նիւթը։ Մի քանի մարդ թշնամու զօրամասից խեղդվեցին։

Յունվարի 21-ին թշնամին յարձակում գործեց Կանտարի վրա, բայց անգլիացիք դիւրութեամբ վանեցին։ Թշնամի կորցրեց 16 սպանված և վիրաւոր և գերի տուեց 40 մարդ։ Անգլիացիների կորուստներն են երեք վիրաւոր։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

23 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սարիղամիշի մօտ 9-րդ զօրաբանակի հրամանատար Իսհան-փաշային գերի բռնելիս նրա մօտ գտնվեց մի ցուցակ, որի մէջ յիշատակված էին այն բոլոր գնդերը, որոնք ամբողջ մնացին Սարիղամիշի կռիւների վերջում, յիշատակելով նրանց կազմը։ Այդ ցուցակը պարզում է որ Սարիղամիշի ճակատամարտի վերջում 9-րդ զօրաբանակը իրապէս դադարել է գոյութիւն ունենալուց, որովհետև բոլոր երեք դիվիզիաներում մնացել են ընդամենը 900 անընդունակ զինուոր։

ԿԱՀԻՐԷ.—Սուլթանը ճաշ է տուել ի պատիւ ռուսաց դեսպան Սմիրնովի։ Ներկայ էին հիւպատոսներ Զուէվը և Պետրովը և ռուսական դիւանագիտական գործակալութեան պաշտօնեաները։

ԹԱՒՐԻԶ.—Ռուսաց և պարսից պահակախմբերի ուղեկցութեամբ քաղաք մտաւ ռուսաց գեներալ-հիւպատոս Օրլովը։ Նրան ցոյց տուին հանդիսաւոր ընդունելութիւն բոլոր վարչական պաշտօնեաները, Ատրպատականի գեներալ-նահանգապետ Սերդար-Ռեշիդը, ռուսահպատակները և հոծ բազմութիւն։ Որովհետև ռուսաց հիւպատոսարանի շինութիւնը թիւրքերը հրդեհել էին, ուստի ռուսական դրօշակը ծածանվեց թիւրքաց գեներալ-հիւպատոսարանի շինութեան վրա, ուր տարել էին մեր հիւպատոսարանի կողոպտված կահկարասիքի մի մասը և ուր այժմ բնակութիւն է հաստատել Օրլովը։ Դրօշակը բարձրացնելիս տրվեցին զինուորական պատիւներ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—30-րդ թիւրքաց դիվիզիայի պետ գնդապետ Մահմէդ-Ջեվատ-բէյը, որ գերվեց յունվարի 14-ի երեկոյեան, բերվեց Գորնէս գիւղը իր շտաբի հետ միասին։

(Լրագիրներից)

◆ Կ. Պոլսում Գօլց-փաշայի նախագահութեամբ կայացաւ խորհրդակցութիւն Էնվէր-փաշայի մասնակցութեամբ։ Ընդունելով որ դրութիւնը Կովկասում վատացել է, խորհրդակցութիւնը գտաւ, որ այժմ պէտք է բաւականանալ ինքնապաշտպանութեամբ և յարձակումը յետաձգել մինչև գարուն։ Անհրաժեշտ է ընդունված ուժեղացնել կովկասեան զօրքը Սիրիայի զօրքերով, իսկ Աֆրիկայի զօրքերին թողնել իրանց տեղերում, որովհետև կարող է պատահել, որ արշաւանք լինի Կ. Պոլսի վրա։

◆ Ռուս զօրքերը մի շարք մանր ընդհարումներից յետոյ գրաւեցին ամբողջ Ալաշկերտի հովիտը։

◆ Բաթումից տեղեկացնում են «Кав. Сл.»-ին. «Մեր զօրքերը գրաւեցին Ջալօն-Դաղը և առաջացան դէպի Թուխալի կիրճը։ Մեր ամբողջ սահմանը Ճորոխի երկրում մեր ձեռքումն է, իսկ ծովի մօտ մեր առաջաւոր զօրամասերը շարժվել են Թիւրքիայի սահմանները։ Նկատվում են բազմաթիւ թիւրք փախստականներ, որոնք յոգնել են պատերազմից և դասալիք են լինում։

◆ Պարսկաստանը պատրաստում է նոր նօտա, որով խնդրելու է Ռուսաստանին պարսկական քիւրդերին զսպել։

◆ Էնվէր-փաշան փաստապէս կորցնելով զինուորական իր իշխանութիւնը՝ հրաժարական է տալիս։ Լուրերի համաձայն, նրան դատի են յանձնելու կովկասեան ռազմաբեմում կրած պարտութեան համար։

◆ «Р. У.»-ն հաղորդում է, որ Էնվէր-փաշան բանակցութիւններ է վարում Իտալիայի հետ՝ միջնորդելու դաշնակիցների հետ հաշտութիւն կնքելու բանակցութիւններ սկսելու մասին։

◆ «Р. В.»-ն յայտնում է, որ «Ֆրանկֆուրտէր Ցէյտունգ» տեղեկութիւն է ստացել Կ. Պոլսից այն մասին, թէ Պարսկաստանը մերժել է Ռուսաստանի և Անգլիայի պահանջը շվէդական օֆիցէրներին ետ կանչելու մասին։

◆ Պետրօգրադի զինուորական շրջանները գտնում են, որ թիւրքաց բանակը, որ կորցրել է իր կազմի կէսը և նիւթական ամբողջ պաշարը, ենթարկվել է կատարեալ քայքայման։

◆ Արդահանը լիքն է թիւրքերով։

◆ Դաշնակիցների աէրօպլանները ռմբակոծեցին Ադրիանուպոլիսը։

◆ Ալէքսանդրիա են եկել Պաղեստինից արտաքսված և կողոպտված 5000 հրէաներ։ Սպասվում են ևս 1000 հոգի։

◆ Կ. Պոլսից հաղորդում են, որ տեղական առևտրականները գանգատվում են գերմանացիներից, որոնք ձրիապէս առնում-տանում են իրանց ապրանքները։

ԻԹԹԻՀԱԴԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԿՈՐԾԱՆՎԵՑ

(Սեփական թղթակցից)

I

Մարանդ, 18 յունվարի

Նոյեմբ. 20-ին ինչպէս որ Էրզրումի բանակը դէպի Օլթի ճանապարհեց Էնվէր-փաշան, այդպէս էլ Մոսուլի և Սիւլէյմանիէի բանակը ճանապարհեց դէպի Ատրպատական աշխարհի Սօուջ-Բուլաղի նահանգը։

Տարբերութիւնն այն էր, որ Օլթի ուղարկված էր 5 կօրփուս (կորպուս), իսկ Սօուջ-Բուլաղ՝ 5 թաբուր (բատալիօն)։

Սօուջ-Բուլաղի ռուս հիւպատոս Եասը ժամանակին զգացել էր, որ քիւրդ աշիրէթները իրան խաբում են և իրանց մէջ ինչ-որ գաղտնի պատրաստութիւն տեսնում։ Հիւպատոսին շրջապատող պարսկական քիւրդ ու թուրք երիտասարդները որքան որ ջանում էին իրանց հաւատարիմ ցոյց տալ և հաւատացնել, թէ քիւրդ ու թուրք երիտասարդութիւնը անձնուիրաբար ծառայում է նորին գերազանցութեան, բայց նա զգացել էր, թէ ինչ-որ նենգամիտ խաղ էին խաղում Պարսկաստանի կեղծաւոր գործիչները։

Երբ յանկարծակի սահմանն անցան և Սօուջ-Բուլաղ պիտի մտնէին օսմ. գնդերը իրանց լեռնական Shneider թնդանօթներով, Եասը կարողացաւ ռուսահպատակների, հիւպատոսարանի անդամների և արխիվի հետ հեռանալ, դիմել Միանդուաբ։

Օսմ. զօրքը, գլխաւոր հիւպատոսը և գերմ. հիւպատոս Շունմանը մտան Սօուջ-Բուլաղ և սկսեցին այնտեղ կարգադրել այնպէս, որպէս իրանց սեփական տիրած երկրում, և աջ ու ձախ մարդ ուղարկել Սինէ, Սակիզ, Բիջար և Սօուջ-Բուլաղի գաւառները, Սարդաշտ, կարգադրութիւններ անել, որ ամէն մի ցեղապետ աշիրէթ՝ իր ցեղի ձիաւորների հետ պատրաստ լինի կռւի դուրս գալու։

Սրանց հետ էր Շէյխ-Հիսամ Ուլլահը, որը Մոսուլից էր եկել, որպէսզի ղեկավարէ քիւրդ ցեղերին, նրանց միացնէ և ոգևորելով դէպի կռիւ մղէ։ Թէև այս պաշտօնը աւելի մեծ եռանդով կատարում էր Ղազի-Ֆաթթահը, բայց վերջիններս գործել էին տալիս վարագոյրի ետևից, որ սրան մարդ չը մեղադրէ և ամէն հրաման արձակվի Շէյխ-Հիսամ-Ուլլահի անունից, որպէսզի քիւրդերի ցեղապետները անխտիր հնազանդվեն, ինչպէս 1880 թ. հնազանդվում էին Շէյխ-Իբաղուլլահին։

Քիւրդ-աղայեանները Ղազի-Ֆաթթահի և Էլ-Խանիի առաջնորդութեամբ արդէն պատրաստված ու միացած էին։

Շէյխ-Ալի-խան Մէջիդ Խանզադէն, Բայիզ-աղան՝ Ղայր-աղա Դէբուքրի որդին՝ թէև նազ էին անում, չէին ուզում հրապարակով ասպարէզ իջնել շահի, մանաւանդ ռուսական կառավարութեան դէմ, բայց քիւրդ աշիրէթի երիտասարդութիւնը, օսմ. ընդհանուր հիւպատոսը, գերման հիւպատոսը և օսմ. բանակի հետ վերադարձած երիտասարդ պարսկական քիւրդերը պահանջում էին անպատճառ, անխտիր բոլորից զինվել և դուրս գալ թէ շահի և թէ ռուսական զօրքի դէմ։

Այս խառնիճաղանճը ամէն տեղ գոռում էր, որ գնալու է ոչ միայն Թաւրիզից դուրս հանելու ռուսներին, Ատրպատականը միացնելու օսմ. պետութեան, այլ և փառաւոր յաղթանակներով մտնելու է Կովկաս, ազատելու ամբողջ Կովկասը ռուսական իշխանութիւնից և տիրելու Բագուի ոսկեբուղխ նաւթային աղբիւրներին։ Միայն Թաւրիզ քաղաքը նրանց պիտի տայ 50,000 հրացանակիր զինուոր։

Երբ տատանվում էին Շէյխ-Ալի-խանն ու Ղայր-աղայի որդի Բայիզ-աղան, Շունմանի խորհրդով սպանեցին Ազիզ-խան սարդարի թոռան՝ Հիւսէյն-խան Սարդարի-Միքրին, որը ոչ միայն հաւատարիմ էր մնացած իր շահին, ոչ միայն 1899 թ. ցոյցերին էլ արգելք էր հանդիսացել, այլ համոզում էր քիւրդ ցեղապետներին հեռու մնալ երիտասարդների սխալ քայլերից, որոնք քիւրդ աշիրէթներին դէպի կործանումն էին տանում։

Հիւսէյն-խան Սարդարի-Միքրի մահից յետոյ Էնվէր-փաշայից հրաման եկաւ առաջ շարժվելու Միանդուաբ, քանի որ ինքն էլ Ուրմիի կողմն էր շարժվել, որպէս զի մինչև դեկտ. 25-ը քիւրդերը օսմ. Թիւրքերին դիմաւորեն Թիֆլիսում, լաւ տօն կատարել տալու քրիստոնեայ աշխարհին։ Դեկտեմբերի 10-ին բանակը կազմ ու պատրաստ շարժվեց դիմաւորելու շահի և ռուսական զօրքերին, որոնք կարգ պահպանելու համար Պարսկաստան էին մտել հինգ տարուց ի վեր։

Միանդուաբում շահի մի վաշտ (500 հոգուց բաղկացած) ղեկավարում էր Փառավազ-խան նայէբը, իսկ Հաջի Սամէդ-խան Շուջա-ուդ-Դովլէն Աֆշար և Զարղովլի ձիաւորների հետ եկել էր Միանդուաբ, որպէս զի քիւրդերի առաջն առնէ։ Բայց երբ օսմ. զօրքը՝ քիւրդ ձիաւորների և պարսկական երիտասարդ կամաւորների հետ յարձակվեց դէպի Միանդուաբ, այնպիսի ռասպելական սահր տարածեցին իրանց թւի մասին, որ մարդ ակամայ կարող էր ցնցվել, ուր մնաց Շուջա-ուդ-Դովլէն ու իր ձիաւորները, որոնք բիւրաւոր քիւրդական գնդերի և հեծելազօրի դէմ դուրս գալուց՝ փախչելը գերադասեցին։

Փառավազ-խանը իր փոքրաթիւ գնդով դիմաւորեց թշնամուն, քաջի նման ընկաւ, զօրքը ցրվեց, բայց այս բոլորը վախկոտ անձնատուութիւնից գերադասեց։ Իսկ մեր հիւպատոս Եասը երբ նկատեց, թէ անհնար է այդ խուժանին դիմադրել, մանաւանդ որ կարգադրված էր թողնել տեղը և ետ դառնալ, նա էլ հեռացաւ Միանդուաբից։ Բայց յանկարծ յիշելով թէ ինչ-որ կարևոր թղթեր է մոռացել Միանդուաբում, իսկոյն անձամբ ետ դարձաւ ճանապարհից, որ ազատէ այդ դոկումենտները, բայց ճանապարհին ընկաւ քիւրդ-դաւաճանի գնդակից։

Ատրպետ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց մեկնել Ցարսկոէ Սէլոյից գործող զօրաբանակը։

Նորին Կայսերական Մեծութիւններ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին Օգոստափառ Դուստրերի հետ բարեհաճեցին ներկայ լինել մաղթանքին Ֆէոդորովսկի տաճարում։

Կայսերական գնացքը շարժվեց առաւօտեան ժ. 10-ին։

Թագաւոր Կայսրին ուղեկցում են ֆլագ-կապիտան Նիլով, պալատական կոմենդանտ Վօէյկով, հոֆմարշալ իշխ. Դոլգորուկով, իշխ. Օրլով, ֆլիգէլ-ադիւտանտներ Դրէնդէլն, Մօրդվինով, Սաբլին և պալատական վիրաբոյժ Ֆէդորով։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Արևելեան Պրուսիայում մեր զօրքերը յունվարի 21-ին կռւով մասամբ առաջացան Շէշուպի երկու ափով, Լասդէնէնի մօտ։

Վիսլայի ձախ ափում Բորժիմովի մօտ ճակատամարտը շարունակվեց խիստ յամառութեամբ և մեր հակառակորդի շատ մեծ ուժերի մասնակցութեամբ։ Մեր զօրաճակատը ճեղքելու նպատակով թշնամին 10 վերստ տարածութեամբ կռւի հանեց 7 դիվիզիա, պաշտպանված՝ 100 թնդանօթով։ Դիվիզիաներից մի քանիսը տարածվեցին զօրաճակատում ընդամենը մօտ մի վերստ։ Մեր հակայարձակումը սկսվեց լոյս յունվարի 21-ի գիշերը, ըստ որում ամբողջ զօրաճակատում սկսվեցին յամառ սուինային կռիւներ, և մեզ աջողվեց ստիպել հակառակորդին դիմել ինքնապաշտպանութեան։ Բորժիմովի մօտ մենք վերցրինք թշնամու երկու գիծ դիրքեր։ Գումինի մօտից թշնամին վանվեց։ Յամառ ձեռնակռիւներից յետոյ մեր զօրքերը ներս խուժեցին Վոլյա Շիդլովսկայա դաստակերտը, որ թշնամին իր ձեռքում էր պահում երկու օր շարունակ, և տիրացանք նրան։ Սակայն, մօտակայում գտնվող օղեգործարանը յունվարի 21-ին մնում էր թշնամու ձեռքում։ Ճակատամարտը շարունակվում է միևնոյն յամառութեամբ։

Կարպատներում կռիւները շարունակեցին զարգանալ Դուկլյնի մօտից մինչև Վիշկով լեռնանցքը։ Սմիդնիկի մօտ, Լաբորչ գետի հովտում և Ուժօկի ուղղութեամբ մեր զօրքերն առաջացան, գերելով մօտ 2000 հոգու ու ձեռք ձգելով 10 գնդացիր։ Տուխոլկ և Բէսկիդ լեռնանցքներում մեր զօրքերը վերջին օրերում ցոյց էին տալիս հերոսական դիմադրութիւն, դիմանալով մօտ 10 սուինային յարձակման և իրանց հերթին գործելով հակայարձակումներ։ Այստեղ թշնամու յարձակվող ուժերը մեծաքանակ են, բայց թշնամու փորձերը՝ առաջանալու Վիշկովի և Տարտարնովի մօտ՝ վանվեցին թշնամու համար խոշոր կորուստներով։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յունվարի

ՊԱՐԻԶ.— Աֆրիկայի նահանգապետը հաղորդում է, որ ֆրանսիական զօրքերը, երկու օր տևող կռւից յետոյ, յունվ. 16-ին գրաւեցին Բէրտուա պահակատեղին՝ Կամէրունի կենտրոնական մասում։ Այս աջողութիւնը կարևոր է, որովհետև այդպիսով դիւրին կը լինի շրջապատել գերմանական զօրքերին։

ՊՐԷՏՕՐԻԱ.— Չորս օֆիցէր և 400 բուր, որոնք կազմում էին ապստամբված Մարիցի զօրքի մի մասը, անձնատուր եղան։ Անձնատուր են եղել նաև Կէկէմորում 529 ապստամբ, որոնց մէջ են 43 օֆիցէր իրանց ղեկավար Կէմպի հետ։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յունվարի

ԼՕՆԴՕՆ.—«Թայմսի» Ռոտէրդամի թղթակիցը հեռագրում է ստոյգ աղբիւրներից. «Գերմանական ռազմանաւ «Զէյդլից»-ը վերադարձաւ Վիլհէլմսհաֆէն չափազանց լուրջ վնասուածքներով և նաւաստիների կազմից զոհերի մեծ թւով։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ.—Լրագիրների ասելով, Պատագոնիայի բարձունքներում աւստրալիական մի յածանաւ ջրասուզել է գերմանական «Վէրման» յածանաւը։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յունվարի

ԼՕՆԴՕՆ.—Իշխան Իւսուպովը Մեծ-Բրիտանիայի զինուորական գործակալ գեներալ-լէյտենանտ Երմոլովի ուղեկցութեամբ այցելեց բրիտանական գլխաւոր զօրաբանակը և յանձնեց ֆէլդմարշալ Ֆրէնչին, Ուէլսի պրինցին և «Ռոեալ-Սկոտչ-Գրէյս» գնդի օֆիցէրներին, որի շէֆն է Թագաւոր Կայսրը, ռուսական շքադրամներ։

ՊԱՐԻԶ.—Ֆինանսների մինիստր Րիբօն նախաճաշ տուեց ի պատիւ ֆինանսների մինիստր Բարկի և Լլոյդ Ջօրջի։ Նախաճաշին ներկայ էին կաբինէտի անդամներից մի քանիսը, ֆինանսների մինիստրութեան գործակալ Ռաֆալովիչը, ֆինանսների մինիստրի ընդհանուր դիւանատան վերատեսուչ Ֆէօդոսիէվ, և մաքսատուրքերի դեպարտամենտի տնօրէն Շատելէնը։ Նախաճաշից յետոյ սկսվեց մինիստրների խորհրդակցութիւնը, որ տևեց 3 ժամ։ Ռուսական կողմից մինիստր Բարկից բացի խորհրդակցութեանը ներկայ էին Ռաֆալովիչը, Ֆէօդոսիէվը և Շատելէնը։ Վաղը հանրապետութեան նախագահը նախաճաշ է տալիս ի պատիւ Լլոյդ-Ջօրջի։

Ֆինանսների մինիստրութիւնը յայտնեց, որ կոնֆերենցիայի աշխատանքների ժամանակ նրանց մասին ոչ մի հաղորդագրութիւն չի լինի։

ՍԱԼՕՆԻԿ.—Եկաւ ներքին գործերի մինիստրը ծանօթանալու համար ժողովրդական ներկայացուցիչների ընտրութիւնների հետ, որոնք կայանալու են մարտին Նոր Յունաստանում։ Այդ հանգամանքը ճշգում է քաղաքական շրջաններում տիրող այն համոզմունքը, որ Յունաստանը մինչև մարտը չի խախտի իր չէզոքութիւնը։

Եկաւ բժշկական մասնաժողովը ընդունելու Կարմիր Խաչի բժշկական պարագաները, որոնք սպասվում են Ամերիկայից և Իտալիայից 24 վագոնով։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.— Սարաէվից հաղորդում են, որ Գաբրինովիչը, Իվանովիչը և Իլլիչը, որոնք դատապարտված էին մահվան պատժի Ֆրանց-Ֆէրդինանդի սպանութեան համար, առացան իրանց մահապատիժը բանտում։ Միլօվիչի և Կարլովիչի մահապատիժը փոխարինված է 20-ամեայ տաժանակիր աշխատանքներով։

ՊԱՐԻԶ.—Նախագահը նախաճաշ տուեց ի պատիւ ֆինանսների մինիստր Բարկի և Լլոյդ-Ջօրջի, որին ներկայ էին ռուսական և անգլիական դեսպանները և ֆրանսիական մինիստրները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ներքին գործերի մինիստր Մակլակովը նշանակվում է Պետական Խորհրդի անդամ մնալով ներքին գործերի մինիստր։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատ։ Ասկվիտն առաջարկեց, որ պալատը ամբողջովին նուիրվի բացառապէս կառավարական օրինագծերի քննութեան, մատնանշելով որ ամբողջ եռանդը պէտք է կենտրոնացնել պատերազմի վրա, իսկ միւս բոլոր շահերը պէտք է նրան ենթարկվեն։ Այսպիսի ժամանակ տարաձայնութիւն առաջ բերող հարցեր յարուցելը հակառակ կը լինի ազգի առողջ դատողութեան։ Կառավարութիւնը ներկայացնում է սոսկ այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք անհրաժեշտ են պատերազմը շարունակելու համար։

Բօնար Լօուն համաձայնեց ընդունել այդ առաջարկութիւնը արդարացի, որովհետև կառավարութիւնը վարվում է այնպէս, ինչպէս ֆրանսիական և Կանադայի կառավարութիւնները, որոնք ընդունեցին, որ պարլամենտի ներկայ նստաշրջանները հանդիսանում են միայն զինուորական։

Մակ Նամարան յայտնեց, որ գերմանական սուզքերայ ռազմանաւերը ականներ նետեցին հիւանդանոցային նաւի վրա, որի վրա բարձրացված էր Կարմիր Խաչի դրօշակ։ Հռետորն ասաց, որ քաղաքակիրթ աշխարհը կարիք չունի առանձին բողոքի, որպէսզի զայրոյթով համակվի այդօրինակ զազիր ոճրի հանդէպ (բուռն ծափահարութիւն)։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կրուպպը ստացել է առաջին կարգի երկաթեայ խաչ։

◆ «Н. В.»-ին հեռագրում են Կոպէնհագէնից. «Գերմանական զինուորական իշխանութիւնները Էլզասից արտաքսեցին 5000 շվէյցարացու։ Շվէյցարական լրագիրները չափազանց խիստ ձևով առաջարկում են ֆեդերալ կառավարութեանը անյապաղ արտաքսել 200,000 գերմանացիներին, որոնք ապրում են Շվէյցարիայում։

◆ Ամերիկայում մեծաքանակ գումարներ են հանգանակվում յօգուտ պատերազմից վնասվածների։ Միայն յօգուտ ռուսական հրէաների հանգանակված է 350,000 դոլար։

◆ Մօսկվա է տարվել կին կամաւոր Կրասնոբիկովան ծանր վիրաւորված։ Հերոսուհին մասնակցել է 19 կռւում և պարգևատրվել է Գէօրգիի շքանշանով։

◆ Զինուորական հեղինակաւոր անձանց կարծիքով, արևելեան ռազմաբեմում, Բալտիկ ծովից մինչև Բուքովինա, կարելի է սպասել, որ խոշոր կռիւներ լինեն։ Բուկա-Բզուրա զօրաճակատում թշնամին կենտրոնացրել է նշանաւոր ուժեր։ Նիդի բարձունում ցոյցեր են կատարվում։ Գլխաւոր գործողութիւնները, ըստ երևոյթին, կը զարգանան Վերին և Ստորին Վիսլայի միջև։ Գործողութեան նպատակը հանդիսանում է՝ մի կողմից շարժվել դէպի Վարշավա, միւս կողմից արգելել մեր մուտքը Տրանսիլվանիա։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՈՐ ԶՕՐՔԵՐԸ

Լրագիրները հաղորդում են, որ անգլիացիները արդէն կազմակերպել են զօրքերի նոր գնդեր՝ ֆրանսիական հողը դուրս բերելու համար և որ արդէն նշանակված են հրամանատարներ այդ զօրագնդերի համար։ Պատերազմի դաշտում անգլիացիները այժմ ունենան վեց առանձին-առանձին զօրաբանակներ, բաղկացած իւրաքանչիւրը 3-ական կորպուսից։ Հաշւելով կորպուսը՝ բաղկացած 40,000 մարդուց, կարելի է եզրափակել, որ անգլիական զօրքերի թիւը մօտիկ ապագայում պատերազմի դաշտում հասցված կը լինի 700,000-ի։

Դա մի խոշոր, զգալի չափով խոշոր թիւ է դաշնակից զօրքերի համար արևմտեան ֆրոնտում, ուր անգլիական զօրքերի թիւը մինչև այսօր հասնում էր ընդամենն 200 հազարի։

Պէտք է ասել, որ անգլիական զինուորը պատերազմի դաշտում գիտէ նոյնպէս գեղեցիկ կերպով կռւել, ինչպէս և միւս՝ մեծ ազգերի զինուորները։ Ֆրանսիական շտաբը խօսում է նրա մասին միշտ ոգևորված, միշտ ամենամեծ գովասանքներով, իսկ գերմանացիները, գլխաւորապէս նրանց մամուլը, խօսելով իրանց ախոյեանների մասին, ամենից խիստ, ամենից կծու, վիրաւորական լեզու բանեցնում են անգլիացիների մասին, մի հանգամանք՝ որից պիտի եզրափակել, որ անգլիացիները շատ էլ, ինչպէս ասում են, երես չեն տուել այդ գերմանացիներին։

Շատ հաւանական է, որ դաշնակիցները, նոր ռազմական ուժերով ամրապնդվելուց յետոյ, դիմեն աւելի ներգործական միջոցների իրանց ախոյեանների՝ գերմանացոց դէմ, քան մինչև այժմ դիմել են։

Նորերս Պետրօգրադում անգլիական հիւպատոսը իր մի արտասանած ճառի մէջ այն միտքը յայտնեց, որ պատերազմը եկող աշնանը յամենայն դէպս պէտք է աւարտել։ Յայտնելով այդ յոյսը՝ նա անկասկած աչքի առաջ է ունեցել թէ նոր աւելացվող ուժերը և թէ այն նորանոր ռազմական պատրաստութիւնները, որոնց արդէն ձեռնարկել են նրա հայրենակիցները առաջիկայ կռիւների համար։ Հիւպատոսի կարծիքով՝ անգլիական զօրքերի թիւը եւրոպական կոնտինենտում մօտ ժամանակամիջոցում հասցված կը լինի 2.000,000-ի։

Ա.

ԳԵՐՄԱՆԻԱՆ «ՅԱՂԹԵԼՈՒ Է»

«Daily Exp.»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, գերմանական արտաքին գործերի մինիստր ֆօն-Եագովը չէզոք պետութեան մի ներկայացուցչի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ յայտնել է.

— Մենք անհանգստանալու պատճառներ չունենք։ Անցքերը ծաւալվում են միանգամայն բարենպաստ կերպով Գերմանիայի համար։ Ահա իմ ենթադրութիւնները. փետրվարի վերջին մենք ճնշելու ենք Ռուսաստանին, մարտի վերջին կը վերջացնենք ֆրանսիական զօրքը։ Ապրիլին մենք վերջնական հաշիւ կը տեսնենք Անգլիայի հետ, և ես կարծում եմ, որ մեր գործողութիւնները կը վերջանան մայիսի կէսին։ Յամենայն դէպս՝ Գերմանիայի բոլոր թշնամիները կը ոչնչացվեն նախ քան յունիսը։

ԱՆԳԼԻԱՅԻ ՎՐԱ ՅԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

«Դէյլի Էքսպրեսսի» յատուկ թղթակիցը գրում է Ամստերդամից.

«Ես իմացայ, որ Գերմանիայի 5 ամիս առաջ պատրաստութիւնները՝ օդային արշաւանք գործելու Անգլիայի վրա «Ցեպպելիններով» գրեթէ վերջացել են։ Գերմանացիք մտադիր են օդային յարձակումը կատարել յունվարի վերջին թւերին։

Սկզբում ծրագրվում էր յարձակումը գործել դեկտեմբերի վերջին, բայց թշնամի օդաչուների՝ Դիւսսելդորֆի և Ֆրիդրիխսհաֆէնի վրա գալը և «Ցեպպելիններ» ոչնչացնելը նրանց ձեռքով՝ հարկադրեցին կոմս Ցեպպելինին յետաձգել այդ համարձակ ծրագրի իրագործումը։ Այժմ նա մտադիր է Անգլիայի վրա ուղարկել 10 առաջնակարգ «Ցեպպելին»։ Սրանց գլխաւոր նպատակն է լինելու վնաս հասցնել նաւատորմին և իրարանցում ձգել մայրաքաղաքը։ Կոմս Ցեպպելինը անձամբ ինքն է ստանձնելու օդային արշաւանքի հրամանատարութիւնը, որպիսի արշաւանքին մասնակցելու խօսք են տուել գերմանական հարիւրաւոր օդաչուներ։ Գերմանիայում մեծ յոյսեր են դնում այդ արշաւանքի վրա։ Ամենքը հաւատացած են, որ դրանով կը հարկադրեն Անգլիային համաձայնել «պատուաւոր հաշտութեան»։ Զինուորականները այդ պատճառով շտապեցնում են կոմս Ցեպպելինին, որովհետև Գերմանիայում նըկատելի կերպով աճում է անհանգստութիւնը, որ առաջացել է Վարշավայի և Կալէի մօտ կրած անաջողութիւններից։ Արշաւանքի ժամանակ դիրիժաբլներին ուղեկցելու են մեծ թւով աէրօպլաններ և հիդրօպլաններ, նաև ականակիրներ և հականականակիրներ։ Միաժամանակ մտադրութիւն կայ յարձակում գործել անգլիական նաւատորմի վրա սուզքերայ նաւակներով։

ԱԶԳԵՐԻ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1914 Թ.

IV

Գերմանիայի հաւատարիմ դաշնակիցներն են ներկայ պատերազմում Աւստրիան և Թիւրքիան։ Վերջինս երբեակ համաձայնութեան համար չէ կարող վտանգաւոր հակառակորդ լինել, քանի որ նրա զօրքը տեխնիքական տեսակէտից ստոր աստիճանի վրա է կանգնած։ Ճիշդ է, Թիւրքիան կարող է պատերազմի դաշտ ուղարկել աւելի քան 1 միլիոն զօրք, սակայն բացասական պայմաններն այդ միլիոնի մեծ մասը դարձնում են կռւող, դիմադրող ամբոխ այլ ոչ կանոնաւոր զօրք։ Բացի այդ՝ Թիւրքիան ստիպված է ներկայ պատերազմում իր զօրքը բաժանել երեք զօրաճակատի կամ մասի. կովկասեան, եգիպտական և նեղուցների շուրջը։ Ուժերի ջլատումը այսպիսով առաւել ևս թուլացնում է թիւրքական ուժի նշանակութիւնը, ըստ որում նրա հանդէս գալը Գերմանիայի համար այն օգուտն ունի, որ երբեակ համաձայնութեան վրա մի նոր և ծանր հոգս կաւելանայ, ապագայումն էլ, թէկուզ վերջինիս յաղթանակից յետոյ, միջազգային բարդ հաշիւներ դուռ կը բանայ։

Գերմանիայի ուժեղ դաշնակիցն է Աւստրիան, որի զօրքը եւրոպական իմաստով է պատրաստված։ Եւ եթէ Աւստրիան պարտվում է, դրա պատճառը ոչ թէ զօրքի ոգու մէջ պիտի որոնել, այլ պետական այն ռէժիմի, որը ազգային անտագոնիզմը, ճնշումը վերացնելու մասին ժամանակ չէ ունեցել մտածելու։ Չափազանց այլատարր է նրա զօրքի կազմը. Զօրքի 50%-ից աւելին սլաւօններ են։

Աւստրիան կարող է հանել մինչև 3.000,000 զինուոր, որոնցից 80%-ը հետևակ է, 8%-ը՝ հեծելազօր, 9%-ը՝ արտիլերիա և 3%-ը՝ ինժեներական։

Մշտական զօրքի թիւը խաղաղ ժամանակ 365,000 է. զինուորական պատրաստութիւն ունեցող պահեստիների թիւը 850,000 է. երկրապահներինը՝ 150,000, իսկ տարեկան նորակոչների թիւը՝ 600,000։

102 հետևակ զօրագնդերից 48-ը՝ սլաւօնական են զուտ, 16-ը՝ գերմանական, 19-ը՝ մադյարական, 7-ը՝ ռումինական և այլն։ Իսկ 42 հեծելազօր գնդերից 2-ը գերմանական է, մինչդեռ 13-ը՝ սլաւօնական, 14-ը՝ մադյարական, 11-ը՝ լեհական և ուկրէյներ։ Մի խօսքով՝ աւստրիական զօրքի կէսից աւելին սլաւօնական է, երբ այսպէս թէ այնպէս որոշ դեր կարող էր խաղալ սլաւօնների դէմ ուղղված պատերազմներին։ Այդ փաստը ակնյայտնի կերպով կատարվեց ներկայ պատերազմում։

Գերմանական և աւստրիական գլխաւոր շտաբները, առհասարակ, ի նկատի ունենալով որ իրանց երկու ցամաքային հակառակորդները՝ Ֆրանսիան և Ռուսաստանը կարող են առնուազն 10 միլիոն զօրք հանել կռւի դաշտը, իրանք ևս նոյնաքանակ ուժի հաշւով կազմել են իրանց պատերազմական ծրագիրը։

Սրանից մի երկու տարի առաջ գերմանական զինուորական շտաբը մշակում է զինախաղութեան մի մանրամասն պլան՝ Ռուսաստանի դէմ յարձակում գործելու Աւստրիայի հետ միասին և պլանը ներկայացնում երկու կայսրների բարեհայեցողութեան, որոնք և հաստատում են այն։ Զօրախաղերը տեղի են ունենում Արևելեան Պրուսիայում, ուր ռուսաց զօրքը պարտվում է և ցիր ու ցան նահանջում մինչև Դնեպր գետը։ Այս զօրախաղերի ծրագիրը ցոյց է տալիս, թէ ինչպէս գերմանացիներն ու աւստրիացիները պատրաստվելիս և փորձեր են անելիս եղել ապագայ մեծ պատերազմի համար։ Ինչ վերաբերում է Ֆրանսիային յաղթելու ծրագրին, այստեղ գերմանացիները «կայծակնահարող» տակտիկով էին արշաւելու դէպի Պարիզ և, տիրելով այն, ծանրութեան կենտրոնը պիտի փոխադրէին ռուսական զօրաճակատը։ Այդ ծրագիրը սակայն չաջողվեց իրագործել, և խանգարողը եղաւ փոքրիկ հերոսական Բելգիան։

Սակայն Ֆրանսիան ինքն ըստ ինքեան արդէն մի զօրեղ պետութիւն է եւրոպական մաքով։ Նրա ցամաքային զօրքի թիւը, Ալժիրն էլ հետը, հասնում է որպէս գործող զօրաբանակ մի միլիոն հարիւր հազար, ուր՝ կռիւներից առաջացած՝ պակասը լրացվում է պահեստում գտնվող զօրքերից։ Ուժերը դասաւորված են հետևեալ կերպ. հետևակ զօրքն է 1096 բատալիոն, 507 հեծելազօր։ Դաշտային, բերդային և այլ տեսակի թնդանօթների թիւը հասնում է 3300-ի։ Այս բոլորին հետևում են երեք տասնեակի չափ ինժեներական գումարտակներ։ Ֆրանսիացիների հոգեկան առաջմղիչ ուժը՝ դա նրանց ջերմ սէրն է դէպի հայրենիքը կամ այն հողը, որի վրա նրանք ապրում են։

Եւ ահա Արևմտեան Եւրոպայի մեծ պետութիւնների ու Ռուսաստանի կողմից ռազմի դաշտ են հանվել միլիոնաւոր մարտիկներ պարունակող զօրաբանակներ, որոնց հսկման երթին ուղեկցում են հազարաւոր լայնաբերան թնդանօթներ ու բազմաթիւ ամբաձիգ օդաչուներ։ Ամբողջ Եւրոպայում բռնկվել է մի սոսկալի, անհելի հրդեհ, որի բոցերը սպառնում են հրդեհելու նաև չէզոք հարևանների երկիրները։

Հին ազգերի անցեալից սկսած մինչև մեր օրերը պատմութիւնը չէ կարող ցոյց տալ մի շրջան, որ այսպիսի ահռելի պատերազմ ունեցած լինէր աշխարհը։

Կատարվում է ինչ-որ մի սոսկալի բան. խառնվել է ամեն ինչ. մի երևոյթի սահմանն ու կերպարանքը դժուար է զանազանել միւս երևոյթից։ Դժուար է ասել թէ ուր է սկսվում քաղաքակրթութիւնն ու կուլտուրան և ուր վերջանում մարդկային անօրինակ բարբարոսութիւնը։

Եւ պատերազմողները միմիայն միլիոնաւոր զօրաբանակները չեն. պատերազմում են և ժողովուրդներն իրանց մտաւոր ու զգացմունքների աշխարհով, իրանց բոլոր մտահոգութիւններով։ Մենք ականատես ենք, թէ ինչպէս պատերազմող պետութիւնները գրեթէ ամբողջովին պարուրվել են զինուորական համազգեստով։ Պատերազմը համաշխարհային է և ահարկու, որովհետև գերազանցօրէն ժողովրդական է, իսկ ժողովրդական է, որովհետև հիմնովին է երերում ժողովրդական տնտեսութիւնը, դիպչում է անխտիր հասարակական բոլոր խաւերի շահերին։ Եւ այդ երևոյթը նկատելի է գրեթէ կռւող բոլոր պետութիւնների ներքին կեանքում. ինչպէս ռուսական և ֆրանսիական տարրերը կռւում են որպէս մի մարդ դարձած, այնպէս էլ աւելի մեծ չափով նաև գերմանացիք, որոնց յամառ կամքը դէպի մի կէտ է միայն ուղղված — դէպի յաղթութիւն։

Ազգերի ներկայ պայքարի նպատակները կամ պատճառները որոնելիս չը պէտք է սանտիմենտալ լինել։ Գերագոյն արդարութիւն, ճշմարտութիւն, ազատութիւն, — դրանք ընդհանուր բառեր են առանց որոշ բովանդակութեան ու իմաստի։ Ներկայ պայքարը ամբողջովին բղխում է սոսկ տնտեսական պատճառներից։

Ռուսաստանի պայքարը Գերմանիայի դէմ տնտեսական է գերազանցօրէն։ Կապիտալիստական կազմերով զօրեղ Գերմանիան գրեթէ ամբողջովին նուաճել էր ռուսական ներքին շուկան և թելադրում էր նրան իր կամքը։ Նրա նուաճումը ակնյայտնի կերպով դիպչում էր ամբողջ ազգաբնակութեան շահերին, ուստի և այս պայքարին եռանդով մասնակցում են և վաճառականութիւնը, և գիւղացիութիւնը, և կապիտալիստը և բանւորը։ Բոլորի տենչը ազատագրուիլն է գերմանական տնտեսական-արդիւնաբերական լծից։ Կապիտալիստն ու վաճառականութիւնը լարված է գերմանական կապիտալի և առևտրի դէմ, գիւղացիութիւնն ու հողագործութիւնը՝ գերմանական գիւղատնտեսութեան նուաճումների դէմ (Ռուսաստանում), իսկ բանւորականութիւնը, ըստ երևոյթին, գերմանական մանր արհեստաւորութեան դէմ։

Ուստի և ռուսական յաղթութեան մէջ տնտեսական ազատագրումն են տեսնում վերոյիշեալ բոլոր հասարակական խաւերը։

Նախորդ գլուխներում նոյն տնտեսական պատճառների մէջ գտանք նաև Անգլիայի, Աւստրիայի և Գերմանիայի պատերազմելու պատճառները։

Կը պատերազմէ՞ր արդեօք Գերմանիան Ֆրանսիայի հետ, եթէ վերջինս կապված չը լինէր Ռուսաստանի հետ սերտ պայմանագրով և չունենար բէվանշի նպատակ Էլզասի և Լօթարինգիայի նկատմամբ։ Դժուար է պատասխանելը։ Բայց այժմ Գերմանիան կռւում է Ֆրանսիայի հետ, մեծ կարևորութիւն տալով վերջինիս ընդարձակ գաղութներին, որոնք առևտրական հսկայական շուկաներ են ներկայացնում մի այնպիսի ծաղկած, հարուստ կապիտալիստական երկրի համար, որպիսին է Գերմանիան։

Բայց եթէ Գերմանիան չը պատերազմէր, Ֆրանսիան ինքը պէտք է հանդէս գար, այլապէս Գերմանիան իր փայլուն յաղթանակներից յետոյ Ֆրանսիայի նկատմամբ միջազգային խոշոր գերակշռութիւն կը ստանար և շատ յաճախ իր կամքը կը թելադրէր երկրորդական դարձած հարևանին։

Սուրխաթեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք. 1) Նորս գիւղից (Հին-Նախի- անի գաւ.), Արշակ Սմբատեանի միջոցով, հանգանակված—55 ր., 2) Խոյթայից (Կաղ- անի շրջան), Գ. ք. Կարաքեանի միջոցով— ր., 3) Պոստիկ գիւղից (Կուբանի շրջան) աթէոս Մելքոնեանից—5 ր., 4) Թիֆլիսում Ա. Ս. Ցարութիւնեանից, յունվար ամսի վճարը—10 ր., 5) Աշտարակից, բժ. Սաժումեանից, յունվար ամսի վճարը—3 , 6) Անդիժանից, Դ. Տատինցովի միջոցով հանգանակված, տեղացիների մէջ (ցուցակը կը տպվի առանձին)—487 ր.։ Գումարը 569 ր.։ Նախորդ ստացված 4314 ր. գումարի հետ (տես «Մշակ» № 14) ստացել ենք 4883 րուբլի։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք 1) Թիֆլիսում, լուսանկարիչ մբատեանից 10 ր., 2) Դուշակ կայարանից, տեղական հայ գաղութի շրջանում հանգանակված Ց. Ղազիկեանի միջոցով, 48 25 կ., 3) Մերվից, Պապովեան քահանայի միջոցով հանգանակված 34 ր., 4) գալից, փոքրիկներ Նուարդ, Ատրինէ, ժէն և Եղուարդ Քաղանճեաններից, տօնական նուէրներ ստանալու փոխարէն 12 , 5) Դուբովկայից, Թ. Մարգարեանից 5 , 6) Թիֆլիսում Ն. Ա. Զակօյեանից, յանձնելու Նպաստ. Ընկերութեան 3 ր. 7) Թիֆլիսում, գրաշար Սարգիս Սաղոյեանի անուանակոչութեան օրը նրա բնակարանում խմբված հիւրերի շրջանում հանգանակված 5 ր., 8) Սուխումից՝ յանձնելու Նպաստ. Ընկերութեան, Մկրտիչ Մէյրամ- եանից 5 ր.։ Գումարն է 122 ր. 25 կ.։ Նախորդ ստացված 7006 ր. 82 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 15) ստացել ենք 129 ր. 7 կոպէկ։

«Մշակի» № 8-ում՝ յօգուտ հայ փախստական-գաղթականների յիշատակված գումարների շարքում մի սխալ է սպրդել։ անկայա կայարանից ստացված նուիրատուութիւնը պիտի լինի ոչ թէ 60 ր., այլ 50 ր., որովհետև 60 րուբլուց մնացեալ 0 ր. յատկացված է տեղիս կուսանաց մենաստանին՝ նուիրատուի ծնողաց մահվան տարեդարձի առիթով հոգեհանգիստ կատարելու։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿ.

(Նամակ խմբագրութեան)

Թէրմէզ (Բուխարա), 12 յունվ.

Թէրմէզի հայ գաղութը, կարդալով լրագրական տեղեկութիւնները Թիւրքահայ փախստականների թշուառ անելանելի դրութեան մասին, բոլորիս սրտին մօտ համարեցինք եղբայրական պարտականութիւնը՝ այսպիսի ծանր րոպէին ձեռք կարկառել և օգնել մեր թշուառ եղբայրներին և քոյրերին։

Ուստի դեկտեմբերի 14-ին, գաղութային ընդհանուր ժողովում, լիազօրեցին մեզ, ի դէմս ստորագրողներիս, Ջրօրհնեաց երեկոյեան [illegible] մաս գալ։ Կատարելով մեր պարտականութիւնը և այդ երեկոյեան շըրջանում տեղը հանգանակեցինք ընդամենը ր. 70 կոպ., որ այսօր փոխադրեցինք խմբագրութեան՝ խնդրելով այդ գումարը յանձնել նորահաստատ Նպաստամատոյց Յանձնաժողովին։

Նախագահ յանձնաժողովի՝
Եր. Տէր-Յովհաննէսեան
Գանձապահ՝ Զ. Մելիք-Բաբաամեան
Անդամներ՝ Արսէն Սափարեան
Թաւադ Ցարութիւնեան

Հայ Նպաստամատոյց Ընկերութեան վարչութիւնը, ինչպէս հաղորդեցինք, որոշել էր կազմակերպել պատկերների, գրքերի, նըկարների վաճառումն յօգուտ փախստականների յունվարի 29-ին, 30-ին և 31-ին։ Այժմ մեզ հաղորդում են, որ թէև թոյլտւութիւն ստացված է, բայց վարչութիւնը, խնայելով որ յունվարի 29-ին, Վարդանանց տօնի օրը, Հ. Բարեգ. Ընկերութիւնն է կազմակերպել հանգանակութիւն «Գթութեան օր» անունով, միևնոյն նպատակով, որոշեց յետաձգել իր վաճառքը և նշանակել պաւսի, Գրիգոր Լուսաւորչի տօնին, ւարի 7-ին։

Ինչպէս մեզ հաղորդում են, Հայ Նպաստ. Ընկերութեան առաջադրած նպատակը հետզհետէ համակրութիւն է գտնում և գա- նում։ Վարչութիւնը որոշել է տպագրված կոչեր ուղարկել ամեն տեղ և խընդրել աջակցութիւն։

ԳԷՈՐԳԻԻ ՇՔԱՆՇԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԱՅ ԱՍՊԵՏՆԵՐԸ

(Պատմական յիշատակարաններից)

Օգտվելով այն առիթից, որ Նորերս, ինչպէս գրված է թերթերում, հայ կամաւորների քաջ և ժողովրդական հերոս Անդրանիկը պարգևատրվել է ս. Գէորգիի խաչով, աւելորդ չենք համարում մի քանի բացատրութիւններ տալու պատերազմական այդ շքանշանի և նրան պատւով կրած հայազգի մի շարք հերոսների մասին։

Պատերազմ գնացող ամեն մի զինւորականի համար, լինի նա հասարակ զինւոր, կամաւոր թէ օֆիցեր, ամենալաւ բարեմաղթութիւնը, որ անում են, այդ այս է՝

— Բարով գնաս պատերազմ և վերադառնաս Գէորգիի խաչով։

Եւ ճիշդ որ, ռուսական բոլոր ութ տեսակ շքանշանների շարքում սուրբ Գէորգիի շքանշանը ամենայն իրաւամբ վայելում է եզակի յարգ, և այդ այն պատճառով, որ Գէորգի ստանալու համար անհրաժեշտ է պատերազմի մէջ ցոյց տալ ռազմական արտակարգ քաջութիւն և կամ կատարել շատ աչքի ընկնող, բացառիկ մի գործողութիւն. ուստի բնական է, որ երբ պատերազմից վերադառնում է զինւորն ու զինւորականը պարգևատրված Գէորգիի նշանով՝ նրա խաչով, շքանշանով և նոյն իսկ սրա հասարակ ժապաւէնով մէդալի վրա, հերոսի երեսին փայլում է հպարտ ժպիտը, և նրա մէջ, կարծես, կարդում ես կատարած քաջագործութեան ամբողջ պատմութիւնը։

Ահա թէ ինչու Գէորգին բառիս բուն մտքով իդէալ է ամեն մի զինւորականի, քաջի համար, որ ռազմի դաշտ է գնացել և թշնամու դէմ վարած վտանգաւոր կռիւներին մասնակցել։

Պատերազմական այս պատւաւոր շքանշանը հիմնել է Եկատերինա II կայսրուհին 1769 թ. նոյեմբ. 26-ին ի յարգանս սուրբ Գէորգ Նահատակի և Յաղթական Զօրապետի։

Պէտք է ասենք, որ Գէորգին տրվում է սկսած հասարակ զինւորից մինչև ամենաբարձր զինւորականը՝ ըստ այդ շքանշանների աստիճանների. բայց մեծ տարբերութիւն կայ Գէորգիների մէջ։ Ըստ օրէնքի՝ գոյութիւն ունի երկու կարգի Գէորգի՝ զինւորների (солдатскіе) և օֆիցերական Գէորգի։ Ինչպէս առաջինները, նոյնպէս և երկրորդները լինում են չորս աստիճանի (степень)։ Յաջորդականութիւնը՝ զինւորներինը հետևեալն է՝ ամենաստորինը IV աստիճան, յետոյ III, II և վերջապէս I։ Նոյնը և օֆիցերական Գէորգիների համար են, այն տարբերութեամբ, որ այն ինչ զինւորների Գէորգին միայն ոսկէ խաչ է, օֆիցերականը ներկայացնում է երեք տարբեր նշաններ ա) ուսին գցելու ժապաւէն երեք սև և երկու դեղին գոյներից, բ) ոսկէ քառակուսի աստղ՝ կենտրոնում ս. Գէորգի վենզելով, գրված շուրջը «ծառայութեան և քաջութեան համար» և գ) ոսկէ խաչ սպիտակ էմալով, մէջտեղում ս. Գէորգ Զօրավարը վիշապին նիզակելիս։ 1869 թւից այդ երեք նշանների վրա աւելացաւ նաև չորրորդը՝ ոսկէ թուրը։

Եւ այսպէս՝ մեր քաջարի խմբապետ Անդրանիկը ստացել առայժմ միայն զինւորի Գէորգի խաչի IV աստիճանը, այսինքն այդ շքանշանի ամենաստորին աստիճանը, որը որևէ աչքի ընկնող գործի և քաջութեան համար ստանում են զինւորները (солдаты), կամաւորները, միլիցիոներները և այլն։ Հաղուագիւտ չէ, որ կռիւների ժամանակ մի հասարակ զինւոր իր քաջութեան համար ստանայ այդ խաչի բոլոր չորս աստիճաններն էլ. օրինակ հասարակ կօզակ Կուզմա Կրիւչկովը ունի այժմ զինւորի Գէորգիի IV, III և II աստիճանները իր կատարած մի շարք քաջութիւնների համար։ Լրագիրներում կար, որ աւստրիացիների դէմ մղած ներկայ պատերազմում մի այլ կօզակ երկու ամսվայ մէջ ստացել Գէորգիի բոլոր չորս աստիճանները։

Պէտք է ասենք, որ պատերազմի մէջ ինչպիսի քաջութիւն ու հրաշք էլ ցոյց տայ մէկը, որը օֆիցեր չէ (ռուսական ծառայութեան), նա ոչ մի դէպքում չի կարող արժանանալ օֆիցերական Գէորգիի, այլ միայն զինւորի Գէորգի և այն էլ նրա ստորին՝ IV աստիճանը, յետագայ քաջութեան համար III և այլն մինչև I-ը։

Բացի Գէորգիի խաչից՝ կան արծաթեայ մէդալներ՝ Գէորգիի ժապաւէնով, որ տըրվում են դարձեալ զինւորներին և նոյնիսկ ոչ-զինւորներին (ստրաժնիկ, կամաւոր, լրտեսներ և այլն)՝ նրանց կատարած որևէ աչքի ընկնող ծառայութեան համար։ Այդպիսի մէդալներ ստացել են մեր հայ կամաւորներից շատերը հէնց այս կռւում, և Թագաւոր Կայսրը, երբ այցելում էր տեղական լազարէթները, այդ մէդալներով էր պարգևատրում վիրաւոր զինւորներին և հայ կամաւորներին։

Գալով օֆիցերական Գէորգիին, դա արդէն շատ մեծ և շատ պատւաւոր շքանշան է, որին արժանանում են միմիայն հազւագիւտ բաղդաւորները՝ անկախ նրանց ունեցած զինւորական աստիճանից։

Որպէս ապացոյց, որ զինւորական աստիճանը ոչ մի դեր չէ կատարում օֆիցերի համար արժանանալու Գէորգիի շքանշանին, կարող է ծառայել մեր հայազգի զինւորական նշանաւոր հերոսներից ամենատաղանդաւորի՝ Ալաջայի հերոս գեներալ-մայոր Շելկօվնիկովի հետ տեղի ունեցած դէպքը։ Սա 26 տարեկան հասակում, ընդամենը պօրուչիկի աստիճանում, լեհական ապստամբութեան ժամանակ, 1863 թւին, գլուխ անցած մի հարիւր դրագուն ձիաւորների, կայծակի արագութեամբ նետվում է թըշնամու խիտ շարքերի մէջ, խլում է նրանից երկու թնդանօթ և հէնց այստեղ կրծքում ծանր վէրք ստանում։ Այս քաջագործութեան համար պօրուչիկ Շելկօվնիկեանը արժանանում է՝ օֆիցերական Գէորգիի IV աստիճանին, շտաբս-կապիտանութեան և՝ առանց սովորած լինելու գեներալնի շտաբի ակադեմիայում՝ ընդունվում է գեներալնի շտաբը, մի բան, որ ռուսական զինւորական պատմութեան մէջ իր նմանը չունի մինչև օրս էլ։ Դրանից յետոյ անցնում է 15 տարի։ Շելկօվնիկեան բազմաթիւ քաջութիւններ է գործում Լեհաստանում, Դաղստանում, Նուխի, Զաքաթալա և այլն, մեծ տաղանդ է ցոյց տալիս, սակայն միայն 1877 թւի սեպտ. 20-ին, Ալաջայի պատմական կռիւների ժամանակ, երբ Շելկօվնիկեան իր 7000 զօրքով շրջում է Մուխթար փաշայի զօրաբանակը, մտնում է նրա թիկունքը և այստեղ 20,000 զօրքի դէմ կռւում ու նահանջը փայլուն կերպով կատարում, այժմ միայն այս արտակարգ քաջութեան համար նա պարգևատրվում է օֆիցերական Գէորգիի III աստիճանով։

Օֆիցերական Գէորգիի IV և III աստիճանի ասպետ էր նաև յայտնի հայազգի զօրապետ գեներալ-լէյտենանտ Արշակ Տէր-Ղուկասեանը։ Յիշատակելու է, որ այս նշանաւոր տակտիկը Գէորգիի IV աստիճանով պարգևատրվեց միայն 40 տարեկան հասակում, երբ նա, որպէս Ապշերօնեան գնդի հրամանատար, իր քաջարի զինւորների մի խմբի հետ առաջինն է լինում, որ բարձրանում է Շամիլի անառիկ Գունիբի բարձունքների վրա և մի ժամում տիրում այդ գօռ ամրութեանը. այս համարձակ քաջութեան համար նա հէնց իրա՝ գլխաւոր հրամանատար իշխան Բարեատինսկիի ձեռքից ստանում է Գէորգիի IV աստիճանը, որ կախում է Տէր-Ղուկասեանի կրծքից, իր վրայից հանելով, իշխ. Բարեատինսկին։ Գալով նոյն զօրապետի՝ Գէորգիի III աստիճան ստանալուն, դա կապված է զինւորական պատմութեան մէջ եզակի, Տէր-Ղուկասեան նշանաւոր նահանջի արտակարգ պարագաների հետ, երբ 1877 թ. յունիսի 3-ին ընդամենը 4500 հոգով Դայարի մօտ և Դրամ-Դաղի լանջերում նա ոչ միայն ջարդեց Մուխթար-փաշայի 25,000-անոց բանակը, այլ, ունենալով իր աչքում 300 վիրաւորներ և 3000 ընտանիք ալաշկերտցի հայ գաղթականներին, իսկ իր ետևում Իսմայիլ-փաշային ու դիմացը Բայազէդը պաշարող թիւրքական մի այլ զօրաբանակ, կլասիքական հերոսներին յատուկ հանգստութեամբ և անվեհերութեամբ 5—6 օրում Տէր-Ղուկասեան անցաւ 145 վերստ տարածութիւն նրա մի շարք վտանգաւոր կիրճերով ու լեռնանցքներով և, առանց մի հատ զէնք ու ռազմամթերք թողնելու թշնամու ձեռքում, այդ բոլորին անվնաս հասցրեց Իգդիր և, իսկոյն վերադառնալով նորից Բայազէդ, յունիսի 28-ին ջարդ տալով Ֆաիկ-փաշային, վերցրեց Բայազէդը և դրանով ազատեց այդ բերդում 23 օր շարունակ յուսահատական կռիւ մղող ռուս մի բուռն բերդապահ զօրքին։

Ահա այս անօրինակ քաջագործութեան համար է, որ գեներալ Տէր-Ղուկասով արժանանում է Գէորգիի III աստիճանին։

Սակայն հայազգի պատերազմական բոլոր հերոսներից և նշանաւոր զօրապետներից միայն գեն.-ադյուտանտներ Լօրիս-Մելիքեանին և Յովհ. Լազարեանին էր, որ վիճակվում է 1877 թւին, ռուս-թիւրքական պատերազմին արժանանալ Գէորգիի II աստիճանի շատ հազուագիւտ շքանշանին, պարգևատրված լինելով մինչև այդ նոյն օրդէնի միւս երկու աստիճաններով։

Իրանց Գէորգի ստանալու պարագաների և ներկայ պատերազմում մինչև օրս Գէորգի շքանշանով պարգևատրված մի քանի նշանաւոր ռուս և օտարազգի զօրապետների մասին կը խօսենք յաջորդ անգամ։

Ա. Երկաթ

1915 ԹՒԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԻՒՋԷՆ

Լրագիրները հաղորդում են, որ շուտով պիտի հաւաքվի Պետական Դուման, որը և զբաղմունքի առարկայ կունենայ 1915 թ. պետական բիւջէն։ Խաղաղ ժամանակին բիւջէի քննութիւնը բռնում էր ամիսներ, իսկ այժմ, նոյն լրագիրների ասելով, բիւջէն հաւանութիւն կը ստանայ մի երկու օրում։ Ասել է, թէ Պետական Դուման կը հաստատէ ֆինանսների մինիստրի կազմած նախահաշիւը։ Այդ նախահաշիւը այժմ հրատարակված է (որպէս յաւելուած «Вѣстникъ Финансовъ, Промышленности и Торговли» թերթի), և մենք հնարաւորութիւն ունենք ծանօթանալու նրա մանրամասներին։

1915 թ. համար սովորական և արտասովոր եկամուտներ սպասվում է՝ 3.089.608,314 ր., իսկ սովորական և արտասովոր ծախք՝ 3.234.308,414 ր.։ Այս թւերից երևում է, որ մուտքը չէ փակում ելքը. մնում է 144,7 միլ. ր. բաց, որի համար մինիստրը խորհում է փոխառութեան դիմել։

Ներկայ պատերազմը առիթ եղաւ, որ արգելվեն ոգելից խմիչքները։ Այդպիսով փակվեց այն յորդահոս աղբիւրը, որ հարիւրաւոր միլիոններ էր տալիս պետական գանձարանին։

1915 թ. բիւջէն այլ ևս մեծ ակնկալութիւն չունի ոգելից խմիչքների հաշւից։ Նոր բիւջէն եկամուտների նոր աղբիւրներ է գտել։ Աւելի ճիշդը՝ նա հին աղբիւրները աւելի է ծանրաբեռնել նոր պահանջներով։ Դրա արդիւնքը եղել է եկամուտների հետևեալ դասաւորումը. Ուղղակի հարկեր՝ 1) հողային, անշարժ կայքերից և տուրք՝ 94,8 միլ. ր. (1914 թ. 83,4 միլ. ր.) կամ յաւելում 13,7%, 2) պետական պարապմունքի տուրք՝ 210,5 միլ. ր. (1914 թ. 156,8 միլ.), յաւելում՝ 34,2%, 3) տուրք դրամագլուխների եկամուտից՝ 37,1 միլ. (1914 թ. 35,7 միլ.), յաւելում 3,9%։ Ուրեմն ուղղակի հարկեր ընդամենը 342,5 միլ. ր. (1914 թ. 276 միլ.) կամ յաւելում 24%։ Անուղղակի հարկեր՝ 1) տուրք խմիչքներից՝ 60,4 միլ. (1914 թ. 55,6 միլ.), յաւելում 8,7%, 2) ծխախոտի տուրք՝ 106,7 միլ. (1914 թ. 81,4 միլ.), յաւելում՝ 31,1%, 3) եկամուտ պապիրոսների գիլզաներից ու թղթից՝ 10,8 միլ. ր. (1914 թ. 4,8 միլ. ր.), յաւելում՝ 123,5%, 4) շաքարի եկամուտ՝ 177,6 միլ. ր. (1914 թ. 149,6 միլ.), յաւելում՝ 18,7%, 5) նաւթային եկամուտ՝ 62 միլ. (1914 թ. 49,3 միլ.), յաւելում՝ 25,7%, 6) լուցկիի եկամուտ՝ 43,5 միլ (1914 թ. 20,2 միլ.), յաւելում՝ 115,3%, 7) մաքսային եկամուտ՝ 233 միլ. (1914 թ. 370,4 միլ.), պակասում՝ 37,1%։ Անուղղակի հարկերից սպասվում է՝ 694,2 միլ. (1914 թ. 731,4 միլ.)։ Թէև բոլոր անուղղակի հարկերը աւելացված են, սակայն մաքսային հարկի խոշոր պակասումով (137,9 միլ.) բիւջէի այս աղբիւրից եկամուտ սպասվում է 37 միլ. պակաս։

Եկամտային բիւջէի երրորդ բաժանմունքը կազմում են զանազան տուրքեր։ Այստեղ սպասվում է. 1) դրոշմային, դատաստանական, դիւանական և վաւերագրերից եկամուտ՝ 133 միլ. (1914 թ. 119,2 միլ.), յաւելում՝ 11,6%, 2) փոխանցող կայքերից՝ 53,2 միլ. (1914 թ. 48,2 միլ.), յաւելում՝ 10,3%, 3) ապրանքներից և նաւահանգիստները այցելող նաւերից՝ 8 միլ. (1914 թ. 10,5 միլ.), պակասում՝ 23,8%, 4) երկաթուղիներով ճամբորդներից և փոխադրվող ծանրութիւնից, ինչպէս և ժամանակաւոր տուրք ճանապարհորդներից, բագաժից ու ծանրութիւններից, ապա նաև փոխադրվող բամբակից՝ 286 միլ. (1914 թ. 32,9 միլ.), յաւելում՝ 769,3%, 5) ապահովագրած կայքերից՝ 10 միլ. (1914 թ. 6,5 միլ.), յաւելում՝ 52,7%, 6) զանազան տուրքեր՝ 18,6 միլ. (1914 թ. 20,5 միլ.), պակասում՝ 9,1%։ Այս բաժանմունքը ընդհանուր առմամբ տալիս է եկամուտ 508,9 միլ. (1914 թ. 237,9 միլ.), յաւելում՝ 113,9%։

Պետական մենաշնորհներից եկամուտ սպասվում է. 1) հանքային եկամուտ՝ 374,000 րուբլի (1914 թ. 350,000), յաւելում—6,9, 2) դրամաշինական եկամուտ՝ 16,7 միլ. (1914 թ. 7,2 միլ.), յաւելում—130,3%, 3) պօստային՝ 109 միլ. (1914 թ. 82,6 միլ.), յաւելում—32,1, 4) հեռագրական և հեռախօսական՝ 53,7 միլ. (1914 թ. 43,9 միլ.), յաւելում—22,3%, 5) պետական գինեվաճառումից՝ 144,2 միլ. (1914 թ. 936 միլ.), պակասում — 84,6%։ Ընդհանուր առմամբ այս բաժանմունքը տալիս է եկամուտ՝ 324,2 միլ. (1914 թ. 1070,2 միլ.), պակասում—69,7%։ Այս խոշոր պակասումի աղբիւրը յայտնի է։ Դա ոգելից խմիչքների արգելումն է։ Սակայն պարզվում է և այն, որ պետական բիւջէն այնու ամենայնիւ չի կարողացել անտես առնել այդ աղբիւրը և նորից եկամուտ է սպասում 144,2 միլ.։

Գանձարանային կայքերի եւ դրամագլուխների բաժանմունքից եկամուտ սպասվում է. 1) հասութաբեր կայքերից ու արդիւնատեղիներից՝ 44,3 միլ. (1914 թ. 48,3 միլ.), պակասում—8,3%, 2) անտառային եկամուտ՝ 85,7 միլ. (1914 թ. 103,2), պակասում—16,9, 3) արքունի երկաթուղիներից՝ 848,6 միլ. (1914 թ. 858,6 միլ.), պակասում — 5,5%, 4) արքունի գործարաններից, տեխնիկական ձեռնարկութիւններից և մթերանոցներից՝ 25,8 միլ. (1914 թ. 26,3 միլ.), պակասում 1,7%, 5) դրամագլուխներից և բանկային ձեռնարկութիւններից՝ 39,9 միլ. (1914 թ. 48,7 միլ.), պակասում—18,1%, 6) մասնաւոր երկաթուղիների մէջ գանձարանի ունեցած բաժնից՝ 23,9 միլ. (1914 թ. 34,9 միլ.), պակասում—31,5%։ Ընդհանրապէս այս բաժանմունքից եկամուտ սպասվում է 1068,2 միլ. (1914 թ. 1119,9 միլ.), պակասում—4,6%։ Պակասումը պիտի վերագրել զօրաշարժին և պատերազմին։

Պետական անշարժ կայքերի օտարացումից սպասվում է եկամուտ 1,8 միլ. (1914 թ. 1,9 միլ.), պակասում՝ 5,1%։

Փրկանքի վճարներից 1,9 միլ. (1914 թ. 0,9 միլ.), յաւելում՝ 97,4%։ Սա գիւղացիական տուրք է և նրա գանձումը հաւանօրէն տեղի պիտի ունենայ առանց թուլացումների։

Պետական գանձարանի ծախսերի վերադարձումից սպասվում է. 1) մասնաւոր երկաթուղիների պարտադիր վճարներից 16,9 միլ. (1914 թ. 20,6 միլ.), պակասում—17,9%, 2) օժանդակութիւնների և այլ ծախսերի վերադարձումից՝ 63 միլ. (1914 թ. 53,1 միլ.), յաւելում—18,7%, 3) կողմնակի աղբիւրներից օժանդակութիւն պետական գանձարանին՝ 33,8 միլ. (1914 թ. 34,5 միլ.), 4) պատերազմական վարձատրութիւն՝ 9,5 միլ. (1914 թ. 10,2 միլ.), պակասում—6,4%։ Այս բաժանմունքից եկամուտ սպասվում է ընդամենը 123,3 միլ. (1914 թ. 118,4 միլ.), յաւելում—4,1%։ Յաւելումը բացառապէս սպասվում է անցեալում տրված օժանդակութեան հաւաքումից։

Զանազան պատահական եւ մանր եկամուտներ սպասվում է 15,1 միլ. (1914 թ. 15,3 միլ.), պակասում—1,6%։

Ահա և պետական եկամտային բոլոր աղբիւրները և նրանցից սպասվող եկամուտները։ Այդ աղբիւրները պարզորոշ ասում են, որ բիւջէն պահպանվում է գլխաւորապէս անուղղակի տուրքերով։ Պէտք է բարեփոխել այդ սիստեմը։ Պէտք է վերցնել չունևորների ուսերից բիւջէի ծանրութիւնը։ Պետական գինեվաճառութեան արգելումը հրամայական է դարձնում ֆինանսական բարենորոգում։ Եւ դա պիտի կատարվի մի ուղիով. պրոգրեսիվ - եկամտային հարկի ընդունելութեամբ։

Դ. Ա.

Բագու

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հինգշաբթի, յունվարի 22-ին, երեկոյեան ժամը 6-ին, քաղաքային տան մէջ կայացաւ Փախստականների Յանձնաժողովի արտակարգ նիստը, նախագահութեամբ Հ. Առաքելեանի և մասնակցութեամբ ասորի փախստականների ներկայացուցիչների, տեղական մամուլի մի քանի օրգանների և հրաւիրեալ անձանց։

Նախագահը զեկուցեց, որ արտակարգ նիստ է գումարել՝ քննելու ասորի փախըստականներին օգնելու հարցը։ Նրանց թիւը հասնում է 2000-ի. Նրանց դրութիւնը շատ եղկելի է. ապրում են հակաառողջական պայմանների մէջ։ Ասորիներից կազմված մի մասնաժողով, իր հայրենակիցների մէջ հանգանակութիւն կատարելով, կարողացել է 25 օրվայ ընթացքում հայթայթել նրանց ցամաք հաց, թէյ, շաքար և ձրի բնակարան։ Չը կան վերմակներ, տաք հագուստ, տաք կերակուր։

Ապա նախագահը զեկուցեց, որ կան ուղղափառ, կաթոլիկ, բողոքական և նեստորական ասորիներ, որոնց ներկայացուցիչները ներկայ են և խնդրում են օգնութիւն. սակայն աւելի նպատակայարմար է, որ դրանք ամենքը մտնեն ասորական կոմիտէտի մէջ և օգնող կոմիտէտը մի լինի ու անխտիր օգնէ ամենքին։ Ասորի կոմիտէտի ներկայացուցիչները յայտնեցին, որ կոմիտէի կազմի մէջ կան բոլոր դաւանութիւններից անձինք, չը կայ միայն կաթոլիկ պատէր Դիկրուան, որ նոր է եկել և որին կոմիտէտը ուրախութեամբ հրաւիրում է լինել անդամ։ Կոմիտէտի պատւաւոր նախագահն է իսկական խորհրդական Կախանովսկին, նախկին հիւպատոս Պարսկաստանում։

Յանձնաժողովը, լսելով բոլոր զեկուցումները, միաձայն ընդունեց նախագահի առաջարկները՝ 1) յատկացնել ասորի փախստականների համար 3000 րուբլի՝ տալով այդ գումարը հետզհետէ ասորական կոմիտէտին, որ իրագէկ է փախստականների դրութեան, 2) խնդրել քաղաքագլխից՝ բժշկական օգնութիւն ցոյց տալ փախստականներին և ձրի դեղօրայք հայթայթել. և որովհետև իրանց փախստականների մէջ կան բժիշկներ, աւարտած՝ իրանց ուսումը Անգլիայում և Ամերիկայում, թոյլ տալ նրանց բժշկել ասորի հիւանդներին, քանի որ բժիշկների պակասութիւն կայ, և նրանց դեղատոմսերով դեղօրայք բաց թողնել։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հարկաւոր է նախապէս մտածել

Գանձակ, 16 յունվարի

Գանձակի տղայոց գիմնազիայի հայոց կրօնուսոյց Եր. ք. Տէր-Միքայէլեանցը, համաձայն ծխ. ժողովի ընտրութեան, թեմ. կոնսիստորիայի կողմից հաստատված է տեղիս ս. Յովհաննէս եկեղեցու ծխատէր։

Այժմ, երբ հ. Երուանդը նշանակված է արդէն ծխատէր, նա չի կարող այլևս շարունակել գիմնազիայում կրօնուսոյցի պաշտօնը, ինչպէս իրան յայտնված է ընտրութիւնների ժամանակ։ Ուրեմն տեղիս յաջորդն ու թեմ. առաջնորդը, թւում է, հոգս կը տանեն օր առաջ ընտրել տեղիս գիմնազիայի համար առաջիկայ 1915/16 ուսումն. տարվայ համար մի լաւ, ըստ ամենայնի յարմար ու արժանաւոր կրօնուսոյց, որից կախված է մեր 400-ի մօտ երեխաների բարոյական կրթութիւնը և կրօնի դասաւանդումը։ Այս պաշտօնի համար Գանձակում յարմար մարդ չը կայ, հետևապէս հարկաւոր է հրաւիրել դրսից. իսկ մինչև առաջիկայ սեպտ. ամիսը ժամանակ շատ կայ այս բանը անելու։

Յով. Խօջայեանց

—

Ճանապարհորդները թալանված

Լագօդաղ, 16 յունվարի

Երէկ, ուրբաթ օրը, աւանից 10 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ղօբախչօ կոչված լեզգիների գիւղի կլխին «Ցուրտ ջուր» կոչված տեղը թալանեցին տեղացի Գէորգ Բալա-Հայրումեանին և Թիֆլիսից այս կողմերը եկող երկու թուրք չարչիներին, որոնք գնալիս են եղել հաւեր գնելու։ Առաջինից տարել են 6 ր., վերարկուն և տարճանակը, երկրորդից 93 ր. չափ, իսկ երրորդին աջողվել է փախչել դէպի աւանը։ Նա գալով տեղս, իմաց տուեց դէպքի մասին տեղիս պրիստաւին, որը իսկոյն ստրաժնիկներով գնաց թալանման տեղը, բայց աւազակները թալանելուց յետոյ իսկոյն փախել էին։ Ենթադրում են, որ երկու աւազակները օրերումս սպանված յայտնի աւազակապետ Խարազաշվիլիի ընկերները պէտք է լինեն, որոնցից մէկը թուրք է, որ մի ամիս առաջ սպանեց Շրօմա գիւղի նախկին տանուտէր Վանօ Եակօբաշվիլիին։ Ոստիկանութիւնը աչալուրջ կերպով հետեւում է չարագործներին բռնելու։

Մեզանում կատարեալ գարնանային եղանակներ է անում. մանուշակը և ձնծաղիկը վաղուց գլուխ են բարձրացրել և զարդարել դաշտերը։ Եթէ այսպէս շարունակվի, շուտով կը ծաղկեն և ծառերը։

Տեղեկատու

—

Գաղթականական գործի շուրջը

Վաղարշապատ, 10 յունվ.

Լրագրութեան էջերից ինչպէս յայտնի է, խոշոր գումարներ են գալիս Վեհափառի անունով՝ գաղթականներին խնամելու համար։ Վեհի հաստատած յանձնաժողովի անդամները կապ են պահպանում զանազան քաղաքների հետ և աջակցում գաղթականների թէ սնդի և թէ տեղաւորելու առիթով։

Ուղարկված է Երևանի յանձնաժողովին 20,000 ր., Ալեքսանդրօպոլի յանձնաժողովին՝ 5000 ր., Ջուլֆա՝ 5000 ր.։ Նախահաշիւ է կազմված եղել գաղթականների առիթով 50—60,000-ի։ Ճեմարանի աշակերտների հին շորերից բաժանվել է մերկ գաղթականներին մօտ 1300 կտոր։

Յիշեալ յանձնաժողովը, ընկած՝ Վաղարշապատի փողոցը, յարմար բնակարան էր փնտռում հիւանդ գաղթականների համար։ Վերջը գտնվեց 4 սենեակից բաղկացած բնակարան, որը վարձվեց և որտեղ պահվելու են հիւանդները։ Նայելու է վանքի համար վարձված բժ. Տէր-Յարութիւնեանը, որը մօտ օրերս է եկել։ Բացի բժշկից՝ պէտք է լինեն երկու ֆելդշեր և մի մանկաբարձուհի։ Հիւանդներին խնամելու և օգնելու հոգսն իր վրա վերցրեց Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի վարչութիւնը։ Սա ընտրել է երկսեռ մի մասնախումբ, որը օգնելու է հիւանդներին։ Վեհի կոնդակով կազմված յանձնաժողովը և Վաղարշապատի հասարակութիւնից ընտրված մարմինը միացեալ նիստ ունեցան և որոշեցին այստեղի գաղթականներին—որոնց թիւը մի քանի հարիւրի է հասնում—գումարել ի մի և հաւաքել Երևան տանող խճուղու վրա գտնված զօրանոցը, որպէսզի դիւրութիւն լինի ճաշ, հաց և շորեր բաժանելու։ Այդ զօրանոցում հսկելու ու կառավարելու պաշտօնը յանձնվեց Վ. Ք. Աղազադեանին։ Նոյն ժողովում որոշվեց նաև Վաղարշապատում ժողոված դրամը (նոյն նպատակով) յանձնել Վեհին։

Ամսիս 8-ից արդէն սկսել են դէպի Երևան և շրջակայ գիւղերը չուել մեզ մօտ եղած գաղթականները։ Գաղթականները իրանց ցոյց տրված հիւրասիրութեան համար շնորհակալութիւն էին յայտնում Ռուսաստանի իրանց եղբայրներին, որ իրանց այդպէս գրկաբաց ընդունեցին, կերակրեցին և հագցրին։

Թղթակից

—

Պահեստիների ընտանիքներին օգնող նորակազմ ընկերութիւն

Խանքենդ, 12 յունվարի

Այսօր տեղիս պրիստաւի նախաձեռնութեամբ, գիւղական դատարանի շէնքում հասարական ժողով կայացաւ՝ տեղական պահեստիների ընտանիքներին օգնութեան գալու խնդրի առիթով։

Ժողովի էին եկել թէ Խանքենդի հայերը և թէ շրջակայ Ղայբալուի, Կարկաժանի, Փահլուլի, Ջամիլլուի, Խանածախի և Բալլուջայի հայ գիւղացիները, թւով մօտ 100 հոգի։

Պրիստաւը նախ բացատրեց պահեստիների ընտանիքներին տեղական միջոցներով օգնութեան գալու անհրաժեշտութիւնն ու բարոյական պարտականութիւնը և ապա յայտնեց, որ այստեղ հիմնվելիք կոմիտէն՝ Պետրօգրադում հաստատված «Комитетъ по всемѣстной помощи семьямъ запасныхъ»-ի մի ճիւղն է լինելու, ուստի առաջարկեց անդամավճար (3 րուբլուց ոչ պակաս) տալով անդամագրվել։ Անդամագրվեցին մօտ 45 հոգի, և տեղն ու տեղը հաւաքվեց 172 ր.։ Ապա անցան ընտրութեան։ Ընտրվեցին Ա. Մելքումեան (նախագահ), Տ. Իշխանեան (փոխ-նախագահ), Ս. Բարխուդարեան (գանձապահ), Մ. Մուսայէլեան (քարտուղար), Ասլանեան, Ս. Աթայեան, Թ. Բալասանեան և Ս. Առուշանեան, որոնք և պէտք է գործունէութեան աւելի լայն շրջան ընդգրկեն, աշխատելով մեծացնել ընկերութեան դրամագլուխը։

Ընկերութիւնը գլխաւորապէս պէտք է օգնութեան գայ այն պահեստիների ընտանիքներին, որոնք չքաւոր են և կառավարութիւնից նպաստ չեն ստանում՝ անկանոն ցուցակագրութեան պատճառով։

Պրիստաւը այստեղից անցաւ դէպի միւս գիւղերը միևնոյն միսիայով։

Ա. Ասլանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Թիֆլիս վերադարձաւ Նահանգապետ Ստրախօվսկի դէպի Հիւսիսային Կովկաս կատարած իր ճանապարհորդութիւնից։

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրօն Եկատերինօդարի քաղ. վարչութեան փոխադրեց 50,000 ր. վիրաւոր զօրականների համար լազարէթներ կահաւորելու։

◆ Նահանգական բանտի լազարէթի (№ 8) մի մասը յատկացված է բացառապէս տիֆով հիւանդների համար։

◆ Քաղաքային վարչութիւնը, Ռօստովից ստանալիք 40 վագօն ալիւրը որոշել է բաժանել հացթուխների միջև, սակայն այդ ալիւրը, որ 11 օր առաջ արդէն բերված էր վագօններով Ռօստով, մինչև այժմ չէ ստացվել։ Այժմ քաղ. վարչութիւնը դիմել է Թիֆլիսի շրջանի զօրքերի կոմենդանտ և պետ Վօլսկիին, խնդրելով ներգործել, որ ալիւրը կանօնաւորապէս ստացվի երկաթուղիներով, որովհետև նրա պակասութիւն է զգացվում։

◆ Ալիւրի ուշ ստանալու պատճառով ահա երկու օր է քաղաքի հացթուխներից շատերը հաց չեն թխում։

◆ Հայ Օրիորդների Կոմիտէն, ամսիս 27-ին յօգուտ փախստականների Թիֆլիսի ժողովարանում կազմում է ներկայացում և համերգ։ Ներկայացվելու են մի-մի գործ. պիէսներ ռուսերէն և հայերէն լեզուներով։

◆ Հրատարակված է հրաման, որի համաձայն վիրաւոր և հիւանդ զինուորների հետ հաւասար կերպով սպիտակեղէն և հագուստ պէտք է տալ բոլոր պատերազմական գերիներին, որոնք դուրս են գրվելու քաղ. հիւանդանոցներից, եթէ նրանք այդպիսիք չունենն կամ եթէ նրանց սպիտակեղէնը և հագուստը լինի այնպիսի դրութեամբ, որ անկարելի կը լինի կարկատել։

◆ Քաղ. վարչութիւնը Թիֆլիսի ազգաբնակութեանը ուղղել է մի կոչ ռուսերէն, վրացերէն, թուրքերէն և հայերէն լեզուներով, որով միջոցներ է ցոյց տրվում ազգաբնակութեան վարակիչ հիւանդութիւններից զգոյշ լինելու։

◆ Վերջին պաշտօնական տուեալների համաձայն, Թիֆլիսի ազգաբնակութեան թիւը, առանց զօրքերի թւի, կազմում է 343,000։

◆ Վրաց թատրոնի շինութեան համար մինչև յունվարի 20-ը ստացվել է 5300 ր.։

◆ Քաղ. դուման իր առաջիկայ նիստերից մէկում քաղ. վարչութիւնը մի զեկուցում է մտցնելու էժանագին բաղնիքներ կառուցելու մասին։

◆ Վերջին տեղեկութիւնները Ակակի Ծերեթելիի առողջական դրութեան մասին նպաստաւոր են։ Բանաստեղծը առողջանում է։

◆ Հայկական Կենտրոնական Կոմիտէտը Մօզդօկի հայերից ստացել է 2500 ր.։

◆ Վաղը, կիրակի, ամսիս 25-ին տեղի կունենայ հայ կաթոլիկ ծխականների ընդհանուր ժողովը, որը զբաղվելու է 1914 թ. ել և մուտ հաշիւների քննութեամբ և երկու աթոռականների ու հոգաբարձական կազմի ընտրութեամբ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—o—

Օպէրա

Օպէրային խմբի ղեկավար Եւլախօվը կամենալով հաճոյք պատճառել Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան և Վան-Բրանտ երգչուհուց յետոյ հրաւիրեց գաստրօլի հռչակաւոր բարիտոն Բակլանօվին, որ հանդէս եկաւ Արքունական թատրոնում չորեքշաբթի, յունվարի 21-ին, Դէ-Մօն օպէրայում, երաժշտութիւն Ռուբինշտէյնի։

Հռչակաւոր երաժշտագէտի Դէմօնը կամ Դեւը իբրև չարութեան ոգի մինչև այսօր տարբեր կերպով է հանդէս բերվել բեմի վրա զանազան նշանաւոր արտիստների կողմից։ Մեր սովորական հասկացողութեամբ Դէմօնը չար ոգի է, հզօր, ամբարշտաւան, տգեղ, հրէշաւոր և անբնական հակումներով։ Չարութեան ոգին այլ կերպ է նկարագրված, օրինակ, Միլտոնի «Դրախտ Կորուսեալի» մէջ։ Հռչակաւոր ռուս երգիչ Շալեապինը այդ տիպը ներկայացնում էր այսպէս. բարձրաբերձ և անտարբեր ժայռի վրա կանգնած է մի տձև գանգուած, գզգզված մազերով, կծկված մատներով, պաժառ դէմքով, մի խօսքով ոչ մարդկային կերպարանքով։ Կան երգիչներ, որոնք ներկայացնում են իբրև Պրոմէթէօս, շղթայված սարի գլխին և անիծող ամբողջ մարդկութիւնը։

Յունվարի 21-ին Բակլանօվը բոլորովին այլ տիպ ներկայացրեց. մի անկեալ հրեշտակի տիպ, գեղեցիկ, կայտառ, քաջառողջ, լի կեանքով և ուրախութեամբ, շքեղ և վայելուչ իր ձևերի և շարժումների մէջ։ Ձեր առաջ կանգնած է մի գեղեցկատեսիլ երիտասարդ շքեղ կազմուածքով, հրապուրիչ ձևերով. եթէ չը լինէին նրա մարդատեաց խօսքերը, դուք կը կարծէիք, որ մի հրեշտակ է կանգնած ձեր առաջ։ Գուցէ այդպէս և պէտք է լինի անկեալ հրեշտակը։

Գալով ձայնական յատկութիւններին, պէտք է ասենք, որ նա չը գոհացրեց շատերին և կարծիքները տարբեր եղան։

Մի բան անուրանալի է, որ արտիստը իր ամեն մի քայլը, շարժումը, դէկցիան կշռում է և, անկասկած, շատ շնորհալի տաղանդ է։ Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։

Հ. Ա.

—

Այսօր Արքունական թատրոնում նշանակված է շնորհալի կոնտր-ալտօ Կօվէլկօվայի բենեֆիսը։ Բենեֆիսառուհին հանդէս կը գայ իր ամպլուայի աջող դերերից մինում՝ «Կարմէնում»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 յունվ.

Յօգուտ փախստականների, ամսիս 29-ին, «Գթութեան և ողորմածութեան» օր կազմակերպող յանձնաժողովը, խնդրում է տիկիններին և օրիորդներին, որոնք ցանկանում են մասնակցել ժողովարարութեանը, դիմել հետևեալ կարգադրիչներին ըստ քաղաքամասերի։

I քաղ.—տ. Վ. Անանեանին՝ Գրիբօեդ. 15, II քաղ.—տ. Մ. Անանեանին՝ Զավչավ. 2, III քաղ.—տ. տ. Կ. Խատիսեանին և Ս. Ցովհաննիսեանին՝ Սերգ. 12, VI քաղ.—տ. տ. Մ. Ղարաջեանին և Հ. Աստուածեանին՝ Գրիբօեդ. 10, V քաղ.—օր. Ե. Քափանակեանին և պ. Ս. Աբովեանին՝ Գայիանեան դպ., VI, VII քաղ.—տ. Նունուֆարեանին՝ Միք. փ. 81, VIII քաղ.—տ. Ս. Մօնինին՝ Կիրօչ. 19, IX քաղ.—տ. Ե. Եարալեանին՝ Ելիզավետ. 50, X քաղ. տ. Ե. Ազամեանին՝ Միքայէլ. փ. 111, XI քաղ.—տ. Ա. Կօստանդինօվային՝ Ալէքս. 13, XII քաղ.— պ. Ց. Եակուբովիչ՝ Չերքէզօվսկայա փ. 79.

Իշխ. Մ. Թումանեան

—

Կուշկա, 2 յունվ.

«Մշակի» 1914 թ. № 282-ում յիշված է տեղիցս ուղարկված 835 ր. մասին և տպված նուիրատուների ցուցակը։ Այդտեղ սպրդվել է մի սխալ, որ խնդրում ենք ուղղել։

Բանն այն է, որ նոյեմբերի 28-ի ժողովը վճռեց զինվորների ծածկոյթի շինման համար հանգանակված 114 ր. ևս կցել վերոյիշեալ գումարին՝ յօգուտ հայ կամաւորների, մինչ ճշմարիտն այն է, որ ժողովը այդ 114 ր. յանձնելով Առ. Բարաթեանին՝ պարտաւորեցնում էր վերջինիս այդ գումարով շինել այդ ծածկոյթը։ Բայց Առ. Բարաթեանը յօժարութեամբ այս 114 ր. ևս յանձնեց յօգուտ հայ կամաւորների, ուրախութեամբ յանձն առնելով մինչև մարտի 25-ը իր միջոցներով շինել ու յանձնել ծածկոյթը, որի համար և տեղիս հայ հասարակութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Նոյնպէս մոռացմամբ չէ յիշված, թէ նոյն ժողովում ընտրված է 5 հոգուց բաղկացած մի մարմին, մինչև պատերազմի վերջը ամեն ամիս ամսավճարի եղանակով պիտի անէ հանգանակութիւն։

Կուշկայի հայ հասարակութիւն

—

Պետրօգրադ, 8 յունվ.

«Մշակի» երկու №№-ում զետեղված էր պ. V-ի ընդարձակ թղթակցութիւնը Պետրօգրադից Բ. Իշխանեանի «Հայկական հարցի ցանկալի լուծումը» զեկուցման մասին։ Մենք, յիշեալ հաւաքոյթի մասնակցողներս, ստիպված ենք ճշմարտութիւնը վերականգնելու համար յայտնել հետևեալը։ Նախ՝ կարևոր է շեշտել, որ պ. Իշխանեանը իր զեկուցումը արել է մի մասնաւոր և սահմանափակ շրջանում, բաղկացած ընդամենը 13 հոգուց։ Երկրորդ՝ պ. Իշխանեանի զեկուցումը չէր ներկայացնում իրանից ամփոփ մի հաղորդագրութիւն, ինչպէս և ինքը պ. Իշխանեանը խոստովանեց հաւաքոյթում, այլ հայկական հարցին վերաբերեալ մի քանի հիմնական կէտերի լոկ հասարակ մի սխեմա։ Ինչ վերաբերում է զեկուցման առիթով առաջացած վիճաբանութեան, ապագայ թիւրիմացութիւնների առաջն առնելու համար անհրաժեշտ ենք համարում յայտնել, որ մտքերի փոխանակութեանը մասնակցել են 7 հոգի։ Բոլոր ընդդիմախօսներն էլ շեշտելով պ. Բ. Իշխանեանի զեկուցման մակերեսային բնոյթը և այլն քննադատօրէն արտայայտվելով նրա արտայայտած հայեացքների նկատմամբ որոշակի սահմանագծել են իրանց տեսակէտը նրա բռնած դիրքից։ Յիշեալ 7 հոգուց միայն մէկը, որոշ վերապահումներով միացաւ Բ. Իշխանեանի պաշտպանած տեսակէտին, իսկ մնացեալ 6 հոգին բոլորովին այլ և տրամագծօրէն հակադիր հայեացքներ էին հիմնաւորել։ Թէ որչափ այդօրինակ քննադատները կարող են Բ. Իշխանեանի համակիրների տիտղոս ստանալ, թող դատէ ընթերցողը։ Կարծում ենք, որ Բ. Իշխանեանը ինքը կարևոր կը համարէ հերքել իր երկրպագու V.-ի թղթակցութեան տարօրինակ անճշտութիւնները։

Հաւաքոյթի նախագահ՝ Դ. Օքրոյեան

Ս. Մ.-եան, Ց. Ղազարեան, Ա. Շ., Ա. Կարինեան, Սարգիս, Յ. Սահաթճեան, Գարագաշ։

—

Դորպատ, 10 յունվ.

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը այն թերթերի խմբագրութիւններին և բոլոր այն մասնաւոր անձանց, որոնք արձագանք տալով հայրենիքից հեռու բժշկվող վիրաւոր հայ զինուորներիս կոչին՝ ուղարկում են մեզ Կովկասում հրատարակվող օրաթերթերը, որով հնարաւորութիւն են տալիս մեզ, գէթ մամուլի միջոցով, վերապրելու ներկայ պատմական մոմենտում Կովկասի ազգութիւններին յուզող մտքերը, զգացումներն ու յոյզերը։

Ի դիմաց Դորպատում բժշկվող հայ զինուորների՝ Ուսանող Հ. Եաղուբեան

Յ. Գ.—Օգտվելով հանգամանքից ասեմ, որ վիրաւոր զինուորներին ուղարկելիք ծրարներին նամականիշ կպցնելու կարիք չը կայ։ Բաւական է հասցէագրել Юрьевъ-Дорпатъ. Закавказское Армянское Землячество. Для раненыхъ.

Նոյն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԿՈՆԳՐԷՍԸ ԿՈՊԷՆՀԱԳԷՆՈՒՄ

Կոպէնհագէնում հաւաքվել էր չէզոք երկրների սոցիալիստների կոնգրէսը, որին մասնակցել են ներկայացուցիչներ Դանիայից, Շվեցիայից, Նորվեգիայից, Հոլանդիայից, Իտալիայից, Միացեալ-Պետութիւններից և Շվէյցարիայից։ «Հումանիտէ» լրագրի ասելով Նիւ-Եօրկի պատգամաւոր Խայլկվատ անելու է հետևեալ առաջարկութիւնը. 1) ընդհանուր զինաթափութիւն և մշտական զօրքի փոխարէն միջազգային ոստիկանութիւն, 2) գաղտնի դիպլօմատիայի վերացում և բոլոր պարլամենտների լայն կոնտրօլը միջազգային քաղաքականութեան վրա, 3) անհնարին ճանաչել օտար երկրի միացումը մի ուրիշի հետ առանց բնակիչների համաձայնութեան, 4) պարտադիր միջնորդ դատարան միջազգային բոլոր միջադէպերի դէպքերում, 5) միջազգայնացնել բոլոր մեծ ջրանցքները և համաշխարհային ճանապարհները, ինչպէս Դարդանէլը, Ջիբրալտարը և Պանամայի, Սուէզի և Կիլի նեղուցները և 6) ծովերի չէզոքացում։

Եթէ սոցիալիստների ցանկութիւնների այս կէտերը համադրենք Դեշանէլի ճառի հետ, որ արտասանեց ֆրանսիական պարլամենտի վերջին նստաշրջանի բացման ժամանակ, կարելի է եզրակացնել, որ այդ պահանջների երկրորդ կէտը համապատասխանում է այն ընդհանուր տրամադրութեանը, որ առաջացել է պատերազմից։

«Кавк. Сл.»

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցմամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—150

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլօվսկի պր. №
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ր. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ-տեխնիկական աշխատանքներ և շատ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—71

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1881 г. 1896 г.
ПОСТАВЩИКИ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
Э. ИММЕРЪ и СЫНЪ
МОСКВА, Мясницкая ул.
СѢМЕНА
огородныя, цвѣточныя, сельско-хозяйственныя и др. высшаго качества, испытанной всхожести, въ отборныхъ сортахъ.
СѢМЕНА отъ МОРОЗОВЪ НЕ ПОРТЯТСЯ.
ПРЕЙСЪ-КУРАНТЪ ВЫСЫЛАЕТСЯ ПО ТРЕБОВАНІЮ БЕЗПЛАТНО.
Иллюстрированный каталогъ съ 700 рисунками 50 коп.
(М. 310777)

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱՌ [illegible] » — 30
3) ՀԱՅԵՐԻ [illegible], գրքոյկ 5 գ. Ա.. Առաքելեան » — 50
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» հրատարակած ու «Տարազի» հրատարակած մասը) 1
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
0—10

Գայիանեան Օրիորդաց Դպրոցի Հոգաբարձութիւն
Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխականներին հրաւիրում է ծխական ժողովի ամսիս 25- (կիրակի) ժամը 12-ին։
Օրակարգն է՝ ա) քննութիւն անցեալ ուսումնական տարվայ հաշուի և բ) 1914/1 ուս. տար. նախահաշուի։
Ժողովը, լինելով երկրորդը, կայանալու է անկախ ծխականների թւից։
(շ.կ.) 44. 3—2 Հոգաբարձութիւն

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենաշատ ձեռքի ուղղում), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Ստենոգրաֆիա. 3) Դակտիլլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) Առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է ծառայողների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 11—12-ը և երեկ. 4—6-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և այլն. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընթացաւարտութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն անցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՍԵԱՆ
(ա.օ.) 1046. 0—37

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ իրաւունքներով
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Խնդիրների ընդունելութիւն։ Պարապմունքները յունվարի 7-ից։
Լոյս է տեսել «Հաշւապահութիւն» գրքի նաև տեսական մասը։ Գինը 50 կ.։ I Տօմ.
1015. Մանօվսկայա փող. № 13, սեփ. տ.։ 10—10

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.